ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954

Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(**74**-րդ տարի) **Թիվ-1** (1635) *Հունվար 2020*

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող
Խմբագրականի փոխարեն (էջ 1)

2- Հարցազրոյց
Հակոբ Տեր-Խաչատուրյան (էջ 2-3)
Անհրաժեշտ է, որ իշխանութեան խօսքն ու գործը իրարու համապատասխանեն

3- Սոցիալական
***Թադևոս Ավետիսյան** (էջ 4-5)*
Սոցիալական խորացող խնդիրները շղարշվում են ամբոխվարությամբ

4- Դաշնակցական բեմ
***Խաչատուր Ստեփանյան** (էջ 6-8)*
Ռուբեն Տեր-Մինասյանը և Միացյալ Հայաստանի գաղափարը

5- Հայրենի եզերք
***Արա Պուլուզյան** (էջ 9-11)*
2020 թ. արցախյան ընտրություններ. միասնական օրակարգի ընկալմամբ

***Վրեժ Նահատակյան** (էջ 12-13*
Ջավախքի հիմնահարցերը. Ժողովրդագրություն

***Անի Մելքոնյան** (էջ 14-15)*
Նախիջևանը պանթյուրքական գաղափարախոսության համատեքստում

***Հայկազուն Ալվրցյան** (էջ 16-17)*
Հայության խնդիրը թուրք պետականության ազգային քաղաքականության համատեքստում

6- Տարածաշրջանային
***Մելինե Անումյան** (էջ 18-20)*
Արեւմտահայաստանի եկեղեցիները գյուլենականների նկրտումների առարկա

***Վ.Հ.** (էջ 21-24)*
Քաղաքական զարգացումները Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասի պետությունները. Վրաստան

***Զարմիկ Պօղիկեան** (էջ 25-27)*
Աննախադէպ պատերազմ ապրած սուրիահայութիւնը՝ կորուստներ, մարտահրաւէրներ, վերականգնումի աշխատանք

***Շահան Գանտահարեան** (էջ 28-29)*
Լուսարձակային կէտեր՝ միջինարևելյան տարածաշրջանին վրայ

7- Սփյուռք
***Մկրտիչ Մկրտիչեան** (էջ 30-31)*
Հայաստան – ՀՅԴ – Սփիւռք (մինչեւ Սպիտակի երկրաշարժը)

8- Երիտասարդական
***Անահիտ Դանիելյան** (էջ 32-33)*
Հանուն գիտության եւ ազգային արժեքների, կամ ազգայինն առաջադեմ է

9- Պատմության լուսարձակ
Հ.Յ.Դ. Անելիքը Այսօր (էջ 34)

10- Դեմքեր եւ դեպքեր *(էջ 35-36)*

No. 1, 1891 ՄԱՅԻՍ 1

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Խմբագրականի փոխարեն

«Հայ Յեղափոխական Դաշնակցությունը» վերսկսում է «Դրօշակ» պաշտոնաթերթի հրատարակությունը: «Դրօշակի» կենսագրությունը ձուլված է ծնող կուսակցության անցած ճանապարհին այնքան, որ այս երկուսից մեկի մասին հիշելիս հաճախ անդրադառնում ես մյուսին: Սխալված չենք լինի պատկերավոր ներկայացնելով, որ «Դրօշակը» եղել է կուսակցության մաքառումի ու հերոսացման ուղին արտացոլող հայելին: Ազատագրական պայքարի շրջանի «Դրօշակի» խունացած էջերից այսօր էլ զգացվում են պայքարի տաք շունչը, գողգոթայով անցնող ժողովրդի ապրումները, երրորդ հարյուրամյակում հայոց ճակատագրի կեռմանները հաղթահարող հավատավորների մտքի ու սրտի ոգորումները: «Դրօշակը» եղել է գաղափարական այն հնոցը, որտեղ սաղմնավորվել ու բյուրեղացել է ազգային-հեղափոխական-սոցիալական շարժման նպատակը, հիմնավորվել է ազգային երազանքներ

հետապնդող կուսակցության քաղաքական և մարտական գործունեությունը: Պատահական չէ, որ հայ ֆիդայիներն ու զինատարները զենքի հետ «Էրգիր» էին հասցնում նաև «Դրօշակի» համարները:

«Դրօշակ» երևույթը մեզ համար բարոյական հսկա ժառանգություն է և մարմնավորում է իրեն կերտող բոլոր նվիրյալների՝ խոնարհումի արժանի վաստակը: «Դրօշակը» ինքն իրեն վաղուց հաստատած ինքնություն է՝ խորհրդանշական և գործնական ուղերձներով:

Իր նորացող ընթացքի մեջ «Դրօշակը» մեզ համար համազգային հետաքրքրությամբ համակուսակցական օրգան է, մտքի ու գաղափարների թրծման և զարգացման բեմ, հայ կյանքի ներքին ու արտաքին մարտահրավերների մասին բարձրաձայնող խոսափող:

Իր առաքելությունը հաջողելու համար «Դրօշակը» պետք է ձգտի երկխոսության ազգային մտածողություն և մտահոգություն ունեցող բոլորի հետ, լինի անաչառ ու համարձակ:

«Դրօշակի» կողմնորոշիչն ազգային ու պետական շահն է, ազատ, բարեկեցիկ, անվտանգ, ֆիզիկական ու հոգևոր միասնականությամբ շաղկապված հայության կամքը:

Խոսքի առատության մեր ժամանակներում «Դրօշակը» կրկին հրապարակ է իջնում որոշակի բաց տեղ զբաղեցնելու համար: Անկախ պետականության երեսնամյակի շեմին կանգնած մեր երկիրը նման է մի նավի, որի ուղևորները մշտապես նախանձախնդիր են եղել նավի ղեկի մոտ կանգնողների խնդրով՝ անտեսելով դեպի ուր նավարկելու պարագան: Ճանապարհի և նպատակի անտեսման հանգամանքն էլ հիմնականում ձևախեղել է նավավարներ ընտրելու չափանիշը: Չավարտված պատերազմի, անցյալից ժառանգված հիմնահարցերի և նոր ժամանակի բազմազան մարտահրավերների բեռն ուսած՝ մեզ համար թերևս առաջնային պետք է լիներ հին փարոսի նոր լուսարձակումների ներքո կրկին ու կրկին հարցնելն ու հստակեցնելը ինքներս մեզ համար, թե ով ենք մենք, որտեղից ենք գալիս, ինչ միջավայրի հետ ենք փոխհարաբերվում, որն է մեր՝ որպես հայության գոյության իմաստն այս արևի տակ, և ինչ ենք պարտավոր անել ապագայում մեր և մեր սերունդների արժանավոր տեղն ապահովելու համար:

«Դրօշակը», իր ջուրը խմելով սեփական ակունքներից և այլոց փորձառությունը նկատի ունենալով, կջանա հստակեցնել խնդիրներն ու փնտրել դրանց պատասխանները:

Թերևս առայժմ այսքանը, որպեսզի հավակնությունները մեզանից առաջ չընկնեն: Թող որ մեր գործը խոսի մեր փոխարեն: ■

Անհրաժեշտ է, որ իշխանության խօսքն ու գործը իրարու համապատասխանեն

«Դրօշակ»ի նոր շրջանի այս առաջին համարը կը բանանք Հ.Յ.Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի հետ մեր վարած հարցազրոյցով, որ կը ներկայացուցնէ Հ.Յ.Դ.ի տեսակէտները և կեցուածքները ներհայաստանեան և Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն առնչուող խնդիրներուն վերաբերեալ:

«ԴՐՕՇԱԿ».- Ինչպէ՞ս կը գնահատէք ՀՀ քաղաքական ներկայ իրավիճակը և կառավարութեան մօտեցումները:

ՅԱԿՈԲ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ.- ՀՅ Դաշնակցութիւնը 2018ի ժողովրդային շարժման առաջին օրերէն իսկ թիկունք կեցաւ անոր, քաջ գիտակցելով, որ ժողովրդային այդ պոռթկումը կրնար առաջնորդել յոյսի վերազարթնումին ու Հայաստանի մէջ խորհրդային շրջանէն վերապրած ախտաւոր շարք մը երևոյթներու վերացման:

Բեկումնային փոփոխութիւններու անհրաժեշտութիւնը կը բաժնէինք, միաժամանակ պահանջելով, որ սամանադրական տրամադրութիւնները լրիւ յարգուէին և պետութեան հիմերը չխարխլէին:

Բոլորս ալ ողջունեցինք շարժման խաղաղ նկարագիրը և օրէնքի գերակայութիւն, արդարութիւն ու հաւասարութիւն հաստատելու խոստումը: Միաժամանակ զգուշացուցինք, որ պարզապէս նախկին վարչակարգը մերժելով, ու առհասարակ միայն «մերժելու» տրամադրութեամբ առաջնորդուելով, կարելի չէ առաջ շարժիլ ու երկիրը առաջ մղել, այլ, հարկաւոր է ունենալ յստակ տեսլական և իրապաշտ առաջնահերթութիւններ: Նշեցինք նաև, որ պէտք է խուսափիլ թիրախաւորուած հետապնդումներէ, որովհետև ընտրովի արդարադատութիւն իրագործելը ինքնին անարդարութիւն է: Նշեցինք նաև, որ աշխոյժ ընդդիմութեան գոյութիւնը և կարծիքներու այլազանութիւնը քաջալերելը լաւագոյն գրաւականն է ժողովրդավարութեան:

Այս իրողութեան գիտակցութիւնը և պայմաններու ապահովումը առաջին հերթին իշխանութեան պատասխանատուութիւնն է, շատ բնականաբար:

Առաւել, նոր վարչակարգին մօտիկ շրջանակները ձեռնարկեցին հակադաշնակցական պայքարի, որ միայն ուժերու ջլատումի կ՚առաջնորդէ և համահայկական համախմբուածութիւնը կը խախտէ:

«Ներսի» և «դուրսի» դաշնակցականներ սահմանելու, ՀՅԴ-ի «հին» ու «նոր» ղեկավարութեան միջև հակասութիւն տեսնելու, ազգէն ներս ներքին թշնամիներ փնտռելու փորձերը անհասկնալի ու անընդունելի են: ՀՅԴ-ն մէկ ու ամբողջական նուիրումի կազմակերպութիւն է, գաղափարական կեդրոնացումով ու այո՛, վարչական ապակեդրոնացումով, որ կը ծառայէ հայրենիքին և աշխարհի չորս ծագերուն տարածուած հայութեան:

Ժամանակը ցոյց տուաւ, որ իրենց սկզբնական յաջողութիւններուն կողքին (կաշառակերութեան դէմ պայքար, օրէնքի գերակայութեան ձգտում, Արցախը բանակցային գործընթացի մասնակից դարձնելու միտում), նոր իշխանութիւնները ունեցան, և կը շարունակեն ունենալ խարխափումներ և անընդունելի դրսևորումներ: Անհանդուրժողականութիւնը, ազգային կարգ մը արժէքներու հանդէպ արհամարհական վերաբերմունքը, առաւել՝ իշխանութեան կարգ մը տարրերու մօտ նկատելի՝ հայկական արժէքներու հանդէպ անտարբեր, ապազգային ու աշխարհաքաղաքացիական (cosmopolitan) արևելումը, ուրիշները լսելու անատակութիւնը և միանձնեայ կեդրոնացեալ ղեկավարութեան հակումը մեզի ու շատերուն համար մտահոգիչ դրսևորումներ են:

Մեր ակնկալութիւնն էր, որ նոր իշխանութիւնը համախմբէր ժողովրդային բոլոր շերտերը. բայց ընդհակառակը, ան բաժանարար գիծեր և ծայրայեղ բևեռներ ստեղծելով առաջնորդուեցաւ: Եթէ հասկնալի էր բարկացկոտ, անհանդուրժող ու անթեքելի կեցուածքները իբրև ժողովրդային շարժման ղեկավարութիւն, այսօր նոյն ընդդիմադիրի ոճով կարելի չէ ղեկավարել երկիրը, երբ վարչակարգին տէրն ես, մանաւանդ որ կը տիրապետես իշխանութեան բոլոր լծակներուն: Հիմա անհրաժեշտ է, որ խօսքն ու գործը իրարու համապատասխանեն. հիմա այլևս կարելի չէ ամէն ինչ վերագրել նախկիններուն և խուսափիլ պատասխանատուութենէ: Այլևս պէտք է դադրի ներքին թշնամիներու որոնումը (մեր թշնամիները երկրէն դուրս են). հիմա Հայաստան-Սփիւռք կամուրջները պէտք է ամրակայուին. հիմա համահայկական միասնութիւն ստեղծելու տեսլականով պէտք է առաջնորդուիլ:

Բնական է նաև, որ երկրի ղեկը ստանձնելէն աւելի քան մէկ ու կէս տարի ետք, նոր վարչակարգը պէտք է արժևորուի իր իրագործումներով և բացթողումներով:

Գալով Արցախին, այդ մասին կ՚անդրադառնանք այլ հարցազրոյցով մը:

«Դ.».- Լուրեր կը շրջագային, թէ սահմանադրական փոփոխութիւններով իշխանութիւնը կը փորձէ իրականացնել Սահմանադրական Դատարանի ներկայ կազմը հրաժարեցնելու իր առաջադրանքը, ինչպէս նաև՝ կիսանախագահական համակարգի վերադառնալու մտադրութիւնը: Ինչ է ձեր կարծիքը այս փոփոխութիւններուն կապակցութեամբ:

ՅՏԽ.- Ազգային ժողովին մէջ քննարկելի Սահմանադրութիւնը փոխելու նախագիծը որ կը շրջանցէ Սահմանադրական Դատարանի վերահսկողական տրամադրութիւնը, ճիշդ մօտեցում չէ, մանաւանդ որ այդ ձևով կը խախտի քաղաքակիրթ աշխարհին մէջ նուիրականացած օրէնսդիր, գործադիր և դատական իշխանություններու բաժանման և հաւասարակշռման սկզբունքը: Այդ սկզբունքը ժողովրդավարութեան խարիսխն է և ոյժի կուտակման վտանգաւոր գործընթացի կանխարգիլման երաշխաւորը: Մենք խիստ ջատագովն ենք սահմանադրական կարգերու ամբողջական յարգումին ու միայն Սահմանադրութեան մէջ ճշդուած մեքանիզմով անոր մէջ փոփոխութիւններ մտցնելու գործընթացին:

Երբ Սահմանադրութեան փոփոխութիւններու օրակարգը դառնայ առաջնահերթ, Հ.Յ.Դ.ին համար էական են հետևեալ սկզբունքները՝

1. Անխախտ պահել խորհրդարանական համակարգը և համամասնական ընտրութիւններու դրութիւնը: Անշուշտ, միաժամանակ, միշտ համամիտ եղած ենք «ռէյթինկային» ընտրակարգի վերացման և ընտրական օրէնսգիրքին մէջ բարեփոխումներ կատարելու մօտեցումներուն:

2. Վերացնել երկքաղաքացիներու ՀՀ քաղաքական կեանքի մասնակցութեան բոլոր արգելքները: Հայաստանի նման մեծ ու յանձնառու Սփիւռք ունեցող երկիր մը, որ պարտի քաջալերել հայրենադարձութիւնը, առաջին առթիւ պարտի վերացնել այս ուղութեամբ առկայ սահմանադրական արգելքները:

3. Վերանայիլ նախագահ-վարչապետ-Ազգային Ժողովի իրաւասութիւններու շրջանակը գերվարչապետական համակարգը բարեփոխելով, նախագահի իրաւասութիւնները վերանայելով և օրէնսդիր, գործադիր ու դատական իշխանութիւններու բաժանման և հաւասարակշռման սկզբունքը ամրագրելով:

«Դ».- Իսկ ինչ ունիք ըսելիք Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու որակին և մարտահրաւէրներուն մասին:

Կը կարծեմ, որ տակաւին բաւական ճամբայ ունինք կտրելիք Հայաստան-Սփիւռք փոխադարձ ճանաչողութիւն ապահովելու, համահայկական իսկական կարողականութիւնը գնահատելու և այդ կարողականութենէն բխող աշխատանքային ծրագիր մշակելու համար: Առանց թերագնահատելու անցեալին կիրարկուած ջանքերը արտաքին գործերու նախարարութեան ու ապա՝ Սփիւռքի նախարարութեան կողմէ, հիմա ժամանակն է աւելի խորքային ծրագրաւորման ու գործադրման մեքանիզմներ որդեգրելու:

Մենք կը հաւատանք, որ հզօր հայրենիքի երաշխիքը յանձնառու Սփիւռքն է: Համոզուած ենք նաև, որ Սփիւռքը հայրենի պետութեան հոգածութեան մշտական առարկան պէտք է հանդիսանայ: Երկկողմանի յարաբերութիւնները թելադրողական ոճով պէտք չէ ընթանան, այլ հիմունին փոխադարձ վստահութեան և համաձայնեցուած ու համադրուած ծրագիրներու վրայ: Հոս պէտք է նշել հայրենադարձութեան լուրջ ծրագրի մը անհրաժեշտութիւնը, որուն պէտք է ձեռնարկենք ազգովին՝ հայրենի պետականութեանց և համահայկական կառոյցներու լիակատար համագործակցութեամբ: Միայն թէ Հայաստանի պետութիւնը պարտի հեռու մնալ դէպի արտերկիր «յեղափոխութիւն արտածելու», Սփիւռքը Հայաստանէն կազմակերպելու և նոր կառոյցներ պարտադրելու փորձութենէն: Սփիւռքը խայտաբղէտ վիճակ կը պարզէ, բայց լրիւ կարող է ինքնակազմակերպման՝ համահայկական կառոյցներու միացեալ ջանքերով:

Կասկած չկայ, որ Սփիւռքի մէջ նոր աւիշ ներարկելու, նորարարութիւն սերմանելու, ուժերը համախմբելու և աւելի նպատակասլաց ծրագիրներ մշակելու անհրաժեշտութիւնը կայ: Եւ մենք կը նպատակադրենք 2020ի ընթացքին համահայկական կառոյց ունեցող գլխաւոր կազմակերպութիւններուն հետ իրականացնել Սփիւռքի հարցերու Խորհրդաժողով մը, ուր հանգամանօրէն քննուին այս հարցերը: ■

Սոցիալական խորացող խնդիրները շղարշվում են ամբոխվարությամբ

Թադևոս Ավետիսյան

Անկախացումից ի վեր Հայաստանում դեռևս չեն լուծվել սոցիալական բազմաբնույթ ու տարածված մի շարք խնդիրներ: Դրանք հետևանք են հիմնականում տնտեսության տարերային զարգացման ու շուկայի ձախողումների, սոցիալական ներառական զարգացման բացակայության: Առանց պետության ուղղակի մասնակցության և ակտիվ պետական աջակցության անհնար է լիարժեք գործադրել առկա այն հզոր ներուժը, որը կայուն զբաղվածության միջոցով ի զորու է կրճատելու աղքատ ընտանիքների և արտագնա աշխատանքի մեկնողների թիվը, ինչպես նաև հետևողականորեն բարելավելու մարդկանց կյանքի որակն ու ապահովելու բարեկեցությունը:

2018թ. օգոստոսին հանրությանը ներկայացվեցին ՀՅԴ սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնադրույթները՝ հավաքական այնպիսի լուծումներով, որոնք առարկայորեն ուրվագծում են պետության դերը մեր երկրի տնտեսության զարգացման, սոցիալական անհրաժեշտ ներառականության ապահովման գործում: Որպես սոցիալ-ժողովրդավարական արժեքներ կրող կուսակցություն՝ Դաշնակցության համար առաջնահերթ կարևորություն ունեն աղքատության հաղթահարումը, բնակչության կայուն զբաղվածության ապահովումը, աշխատողների սոցիալ-աշխատանքային իրավունքների և շահերի համալիր պաշտպանությունը:

Սահմանադրությամբ ևս մեր երկրի տնտեսական կարգի հիմքը պետք է լինի սոցիալական շուկայական տնտեսությունը, ոչ թե վայրի կապիտալիզմը: Պետական քաղաքականությունն էլ պետք է ուղղված լինի ընդհանուր տնտեսական բարեկեցության և սոցիալական արդարության ապահովմանը, ոչ թե իրենց սոցիալական խնդիրների համար մարդկանց մեղադրելուն և դրանց լուծման համար կրավորական պահանջներ դնելուն: ՀՀ Սահմանադրությամբ հստակ են պետության դերն ու պարտավորությունը յուրաքանչյուր քաղաքացու սոցիալական խնդիրների լուծման և արժանապատիվ գոյության ապահովման գործում:

Իշխանափոխությունից հետո ևս պետությունը շարունակում է քայլ առ քայլ հեռանալ Սահմանադրությամբ ամրագրված սոցիալական պարտավորություններից՝ «թոթափելով» իր սոցիալական բեռը: Մասնավորապես իրավիճակի ընդհանուր պատկերը այսպիսին է.

- իշխանության եկած քաղաքական ուժի գաղափարախոսական հիմքի բացակայություն, նորից բացառապես շուկայական ինքնակարգավորմանը ապավինելու քաղաքական անպատասխանատու վարքագիծ՝ ամբոխվարական խոստումներ, վիճակագրական ձեռնածություններ, հանրության շրջանում անիրականանալի սպասումների ձևավորում,
- կառավարության հռչակած հնգամյա ծրագիր, որը չունի ժամանակացույց ու չափելի արդյունքներ, և որի իրականացման պատասխանատուն քաղաքացին է. որքան շատ են քաղաքացու սոցիալական խնդիրները, այնքան մեծ է նրա պատասխանատվությունը իշխանական խոստումները կատարելու գործում,
- սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնական բարեփոխումների հետաձգում, պետական կառավարման բացերի խորացում,
- պետության սոցիալական հիմնական գործառույթների պատվիրակում մասնավորին՝ առանց բավարար լուծումների, հետևաբար նաև իշխանության ուղղակի պատասխանատվության վերացում, պետական ոլորտի աշխատատեղերի կրճատումներ, պետական կազմակերպությունների լուծարումներ,
- աշխատանքի խրախուսմանն ուղղված ամբոխվարական կոչերին զուգահեռ՝զբաղվածության աջակցության պետական ծրագրերի թերակատարում (2018թ.՝ 75 տոկոս, 2019թ.՝ 50 տոկոս), ընդ որում, 2018-2019թթ. աննախադեպ այս թերակատարման հետևանքով գործազուրկների՝ աշխատանքի տեղավորման կորսված հնարավորությունը կվերականգնվի 25 տարում՝ այս իշխանությունների հաստատած «Աշխատի՛ր, Հայաստա՛ն» հնգամյա ռազմավարական

թիրախավորմամբ,

- արտագաղթի հետևանքով աշխատանքային ներուժի էական կրճատում (միայն 2019թ.՝ շուրջ 52 հազարով),
- ստվերից դուրս բերված աշխատատեղերի ներկայացում որպես նոր ստեղծված աշխատատեղեր. 2019թ. գրանցված աշխատողների թվաքանակի աճի 98 տոկոսը ստվերի կրճատման արդյունք է, որը գործազրկության իրական պատկերի վրա իրական ազդեցություն չի ունեցել,
- պետական համակարգի վարձատրության ընդհանուր չափերը որոշող բազային աշխատավարձը չի բարձրանալու նաև 2020թ., իսկ խոստացված բարձրացման փոխարեն, առանց իրավական հիմքերի, բարձրաստիճան պաշտոնյաների վարձատրության եռապատկում,
- երկրի միջին աշխատավարձի աննշան (5-6 տոկոս) աճ և աշխատող աղքատների պահպանվող ցուցանիշ (25 տոկոս),
- 2020թ. նվազագույն աշխատավարձի բարձրացում՝ 55000-ից 68000 դրամի, սակայն պետական բյուջեում կանխատեսվող միջին աշխատավարձի աճը հավասար է լինելու գնաճին,
- ցածր աշխատավարձ ստացողների իրական եկամուտներն առաջանցիկ ավելացնելու խոստումները կատարելու փոխարեն՝ եկամտային հարկի համահարթեցում և միայն բարձր եկամուտ ունեցողների հարկային բեռի էական նվազեցում՝ 36 տոկոսից մինչև 23 տոկոս,
- զուգահեռաբար նաև անուղղակի հարկերի ավելացում, առաջին սպառման ապրանքների գնաճ, այլ կերպ ասած՝ հարկային համակարգի սոցիալական բաղադրիչի իսպառ վերացում,
- աշխատանքային իրավունքների պաշտպանության խնդիրների լուծմանն ուղղված համակարգային բարեփոխումների կասեցում, փոխարենը ամբոխվարական փաթեթավորմամբ աշխատանքային օրենսդրական խնդրահարույց և մասնակի փոփոխություններ,
- տրված խոստումներին հակառակ՝ պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ամբողջական ներդրում,
- ապաշնորհ կառավարման հետևանքով կենսաթոշակային ընթացիկ բարեփոխումների ձախողում՝ աշխատանքային կեղծ ստաժերի շարունակվող հավելագրումներ, այն դեպքում, երբ աշխատանքային ստաժը կենսաթոշակի անցնելու տարիքի (63 կամ 65 տարեկան) և չափի որոշման հիմքն է,
- ընտանիքների անապահովության գնահատման համակարգն արմատապես վերանայելու և առկա ռիսկերը վերացնելու խոստումների կատարման փոխարեն՝ առկա խնդիրները խորացնող մասնակի փոփոխություններ,
- զուգահեռաբար պետական բյուջեից անարդյունավետ և կոռուպցիոն բնույթի աճող ծախսեր, ինչը թույլ չի տալիս առկա հնարավորություններն ուղղել կենսաթոշակների և սոցիալական նպաստների էական բարձրացմանը, փոխարենը 2020թ. ընդամենը 10 տոկոսով կբարձրանա կենսաթոշակի միջին չափը, աղքատության նպաստի չափը կմնա նույնը,
- սոցիալական քաղաքականության արձանագրվող ձախողումների հետևանքով 2018թ. աղքատության կրճատման ցուցանիշը (2,2 տոկոսային կետ) 1,7 անգամ զիջել է 2017թ. ցուցանիշին,
- 2018-2019թթ. ժողովրդագրական իրական ազդեցություն ունեցող ոչ մի նախաձեռնություն, փոխարենը նորից պոպուլիզմ՝ դրված նպատակի տեսանկյունից ի սկզբանե խնդրահարույց փոփոխություններ, պետական բյուջեի հերթական անարդյունավետ ծախսեր,
- բազմազավակ ընտանիքներին ցուցաբերվող պետական աջակցության ծրագրի բացակայություն, որի իրականացումը Սահմանադրության 83-րդ և 86-րդ հոդվածների պահանջն է, փոխարենը ընտանեկան արժեքների պահպանման տեսանկյունից ՀՀ Սահմանադրությանը հակասող Ստամբուլյան կոնվենցիայի առաջ մղում,
- իշխանափոխությունից հետո մշտական բնակչության թվաքանակի նվազում 25000-ով, իսկ արձանագրվող այս ընթացքով 2050թ. մշտական բնակչության թիվը կդառնա գործող իշխանությունների նախատեսածի կեսը՝ 2,5 միլիոն,
- 2019թ. հունվար-սեպտեմբերին բնակչության բնական հավելաճի նվազում 500-ով. ծնվածների թիվը 2017թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 1121-ով, միգրացիայի բացասական մնացորդը կազմել է -14700 (2017թ.՝ -13500), 35549 ՀՀ քաղաքացիներ մեկնել ու մնացել են արտասահմանում, փոխարենը հայտնի երկրներից 26000 օտարերկրացիներ են եկել ու մնացել Հայաստանում:

Այսպիսով, օր օրի խորանում են սոցիալական խոստումների և առարկայական իրավիճակի խզումները, ինչը իշխանությունները փորձում են սքողել վիճակագրական ձեռնածություններով՝ միայն որոշ դրական ցուցանիշներ կտրված ներկայացնելով, իսկ բացասական միտումներն անտեսելով, ինչպես նաև ապագայի համար նոր խոստումներ շռայլելով:

Սոցիալական ոլորտի ակնհայտ ձախողումների համար դարձյալ մեղադրվում են նախկինները, պետական կառավարման իրական բեռը քաշող միջին օղակը, ինչպես նաև աղքատությունը «գլխից չհանած» և «դիվանին պառկած» քաղաքացիները: Իսկ սոցիալական ոլորտում լիարժեք համակարգված է մնում միայն հանրային համերաշխության և համախմբման դեմ մղվող պայքարը:

Ռուբեն Տեր-Մինասյանը և Միացյալ Հայաստանի գաղափարը

Խաչատուր Ստեփանյան

Հայաստանի առաջին հանրապետության անկումից հետո տարագրության մեջ հայտնված հայ մտավորական-քաղաքական գործիչների շրջանում քննարկման առարկա դարձան մի շարք հիմնախնդիրներ: Ամենակարևորը թերևս Հայկական հարցի վերջնական լուծումն էր: Սա շատ բնական էր, որովհետև Անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարի տեսական ըմբռնումով էր պայմանավորված դրա գործնական լուծումը:

Դեռևս անկախության շրջանում՝ 1919 թ. մայիսի 28-ին, Հայաստանի կառավարությունը հանդես եկավ «Միացյալ Հայաստանի ակտով»: «Հայաստանի ամբողջութիւնը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատութիւնն ու բարգաւաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարութիւնը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի ու ցանկութեան, յայտարարում է, որ այսօրուանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբր անկախ պետութիւն»,- հայտարարվում էր վերոնշյալ ակտով[1]: Անշուշտ այդ հռչակագիրը քաղաքական կարևոր նշանակություն ուներ, որի անհրաժեշտությունը հիմնավորվեց վարչապետ Ա. Խատիսյանի կողմից:

1924-1925 թթ. տեղի ունեցավ ՀՅԴ 10-րդ Ընդհանուր ժողովը, որը վերահաստատեց կուսակցության դիրքորոշումը Անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարի վերաբերյալ. «Հ. Յ. Դաշնակցութիւնը կը շարունակէ մնալ Անկախ և Միացեալ Հայաստանի տէսակէտին վրայ: Անկախ Հայաստանի ստեղծումովը պիտի միանան ու ամբողջանան մեր հայրենիքին երկու գլխաւոր հատուածներուն – ռուսահայ և թրքահայ – հողերը այն սահմաններով, որ անհրաժեշտ են մեր երկիրը քաղաքականօրէն կենսունակ միաւոր մը դարձնելու և այսպէսով ապահովելու հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութիւնն ու անոր տնտեսական և մշակութային բարգաւաճումը»[2]:

Ինչպես նշեցինք, Միացյալ Հայաստանի գաղափարի ամրապնդումը նոր կազմավորվող Սփյուռքում դարձավ հայ քաղաքական վտարանդի ղեկավարության կարևոր խնդիրներից մեկը: Պայքարի այս ճակատում իր կարևոր ներդրումն ունեցավ Առաջին հանրապետության ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը: Այս թեմայի շուրջ նա հանդես եկավ բազմաթիվ հրապարակումներով:

Ռուբենն առանձին հոդվածներով հիմնավորում էր հայկական առանձին երկրամասերի՝ Միացյալ Հայաստանի կազմում լինելու անհրաժեշտությունը՝ դրանով վերահաստատելով Միացյալ Հայաստանի գաղափարի իրագործման կենսական

Ռուբեն Տեր-Մինասյան

անհրաժեշտությունը հայ ժողովրդի համար:

Հայաստանի համար Նախիջևանի ունեցած կարևոր նշանակության մասին է խոսվում «Շարուր-Նախիջևան և թուրք-թաթարական քաղաքականութիւնը» և «Նախկրայը և անոր նշանակութիւնը Հայաստանի համար»[3] հոդվածներում: Ռուբենը Շարուր-Նախիջևանում 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում պարբերաբար տեղի ունեցած ազգամիջյան կռիվների հիմնական պատճառ համարում է այն, որ թուրք-թաթարների համար այդ երկրամասը պանթուրքիզմի կարևոր խարիսխներից է: Նախկրայի (ռուս.՝ Նախիջևանսկիյ կրայ: Խոսքը Նախիջևանի Ինքնավար Հանրապետության մասին է) ստեղծման պատճառը Ռուբենը համարում է այդ երկրամասի աշխարհագրական դիրքը : Սա այն տարածքն է, որտեղ խաչվում են Ադրբեջանից, Իրանից, Թուրքիայից և Ռուսաստանից եկող ճանապարհները: Պատահական չէ, որ թուրքերը հեշտությամբ հրաժարվեցին Բրեստ-

Լիտովսկի պայմանագրով իրենց հանձնված Բաթումի նավահանգստից և կառչեցին «աւերակոյտերի մէջ ինկած Զուլֆա, Շահթախտի կայարաններէն և անոնց շրջապատած Նախկրայէն», որը կարողացան դարձնել ինքնավար, պոկել Հայաստանից և տալ Ադրբեջանին:

«Նախկրայը և անոր նշանակութիւնը Հայաստանի համար» հոդվածում Ռուբենը վիճակագրական անհերքելի փաստերով ցույց է տալիս Նախիջևանի՝ Հայաստանին միացման անհրաժեշտությունը թե՛ տնտեսական, թե՛ ժողովրդագրական, թե՛ աշխարհագրական առումներով: Նա այն համարում է Հայաստանի տնտեսական զարգացման, բնակչության համաչափ տեղաբաշխման և սփյուռքահայության հայրենադարձության մեծ ազդակ: Նախիջևանի միացումը Հայաստանին Ռուբենը կարևոր է համարում նաև ազգային անվտանգության տեսանկյունից, խնդիր, որն առավել քան արդիական է մեր օրերում:

«Զանգեզուրի պայքարը»[4], «Գանձակ-Ղարաբաղի վէճը»[5] արժեքավոր հոդվածներում հեղինակը ներկայացնում է հայ ժողովրդի մղած հերոսական պայքարը Սյունիքի, Արցախի և Գանձակի համար՝ նշելով, որ այն որևէ անձի, կուսակցության կամքի կամ քմահաճության արդյունք չէ: Թաթարների ու բոլշևիկների կողմից պարտադրվող «անբնական կացությունը»՝ տեղաբնիկ հայ բնակչության հողազրկություն, եկվորների հանդեպ իրավազուրկ վիճակ, ստիպում էր հայերին ընդդիմանալու: Չնայած այն բանին, որ Առաջին հանրապետության տարիներին այս գավառների մի մասը մաքրվեց թաթարներից, խորհրդային իշխանությունները վերականգնեցին նախկին անարդար դրությունը՝ դրանք վերաբնակեցնելով թաթարներով: Բոստոնի «Հայրենիք» ամսագրի խմբագրապետ Ռուբեն Դարբինյանին հղած նամակներից մեկում Ռուբեն Տեր-Մինասյանը ցավով գրում է. «Ի զուր անցան մեր աշխատանքները մաքրելու: Երանի զոյգ տղաներս մեռնէին, բայց ես չտեսնեի Հայաստանի նորից թաթարացումը»[6]: Անդրադառնալով Գանձակի և Արցախի՝ Ադրբեջանին բռնակցմանը՝ Ռուբենը տարակուսելի է համարում դրա տնտեսական «հիմնավորումը»: Ադրբեջանի տնտեսական հզորացման համար Հայաստանին «քավության նոխազ» դարձնելը անարդար քայլ էր բոլշևիկների կողմից: Իսկ Հայաստանը տուժում էր ոչ միայն տնտեսապես, այլև քաղաքականապես: Արցախի և Գանձակի միացումը Հայաստանին Ռուբենը հրատապ է համարում թե՛ աշխարհագրական, պատմական, տնտեսական, ազգագրական, թե՛ խաղաղության երաշխիքի և մեր ժողովրդի անվտանգության տեսանկյունից:

«Ախալքալաքի պայքարը»[7] և «Տաշիր գաւառին բռնագրաւումը»[8] հոդվածներում պատմական կարևոր անդրադարձ կատարելուց հետո հեղինակը մատնանշում է Ջավախքի և Հյուսիսային Լոռու՝ Վրաստանի կազմում մնալու

տնտեսական, աշխարհագրական և ազգագրական աննպատակահարմարությունը: Ռուբենը շեշտում է, որ այս գավառները Հայաստանին անհրաժեշտ են որպես Վրաստանից և Ադրբեջանից անկախ քաղաքականություն վարելու գրավական: Քանի դեռ այդ շրջաններն ուրիշի ձեռքում են, վտանգված պետք է համարել Դիլիջանը, Իջևանը և նույնիսկ Շիրակը:

Վերոհիշյալ գավառներին անդրադառնալուց հետո Ռուբենը «Հայաստանը Անդրկովկասեան Դաշնակցութեան մէջ» հոդվածում[9] շարունակում է տրամաբանորեն ներկայացնել վիճակագրական ցցուն համեմատություններ և ցույց է տալիս խորհրդային իշխանությունների վարած ոչ հայանպաստ սահմանային բաժանումների քաղաքականությունը: Հայերը, կազմելով Անդրկովկասի բնակչության 24,6 %-ը, զբաղեցնում են երկրամասի տարածքի 16,4 %-ը միայն: Վրացիները, կազմելով Անդրկովկասի ազգաբնակչության 25,6 %-ը, զբաղեցրել են տարածքի 37,4 %-ը, իսկ թաթարները՝ բնակչության 22,1 %-ի դիմաց տարածքի 46,5 %-ը: Ելնելով Հայաստանի և հայ ժողովրդի այդ կացությունից՝ Ռուբենը ներկայացնում է խնդրի լուծման Հ. Յ. Դաշնակցության ծրագիրը, որի գործադրումը նա համարում է ազգային անվտանգության երաշխիք:

«Քաղաքականապէս այս դաւին Հ.Յ. Դաշնակցութիւնը կը հակադրէ իր վճռական կամքը՝ ներկայ Հայաստանին միացնել Ախալքալաքը, Տաշիրը (Հյուսիսային Լոռի – Խ. Ս.), Լեռնային Գանձակը, «Քիւրտկրայը» (Քրդական ինքնավար շրջանը, որը խորհրդային առաջին տարիներին ստեղծվել էր Զանգեզուրի և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի արանքում), Հայկական Ղարաբաղը և «Նախկրայը»: Դաշնակցութեան այդ կամքը նաև հայկական ազգային ամբողջացման և պաշտպանութեան պահանջ է»,- գրում է Ռուբենը[10]:

«Միացյալ Հայաստանը» հոդվածում[11] Ռուբենը թվարկում է այն պատճառները, որոնցից բխում է ՀՅԴ՝ Միացյալ Հայաստանի ծրագիրը. Հայաստանի

և հայ ժողովրդի պատմական անցյալը, հայկական ազատագրական շարժման հետևողական ընթացքը, հայ ժողովրդի և սերունդների անապաստան, հայրենազուրկ վիճակը, Հայաստանի անվտանգության անհրաժեշտությունը, Հայաստանի՝ տնտեսական և աշխարհագրական ամբողջություն կազմելու ձգտումը, Առաջավոր Ասիայում վերջնականորեն խաղաղություն հաստատելու պահանջը: Ռուբենն առանձնապես կենտրոնանում է անվտանգության և սփյուռքահայությանը ուծացումից փրկելու անհրաժեշտության վրա: Միայն Միացյալ Հայաստանի պայմաններում է հնարավոր ապահովել հայ ժողովրդի և հայոց պետականության տնտեսական ու քաղաքական հզորությունը, անվտանգությունը, միայն Միացյալ Հայաստանի մեծ տանիքի ներքո համախմբվելով սփյուռքահայությունը կարող է փրկվել վերջնական ուծացումից:

«Վասպուրականը իբրև անկիւնաքար Միացեալ Հայաստանի»[12] և «Հայաստանի արևելքը (Բագրևանդ և Սուրմալու)»[13] հոդվածներում Ռուբենն անդրադառնում է Թուրքիայի կողմից բռնագրավված և ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող հայկական տարածքներին: «Եթէ կուզենք ապահով Հայաստան մը կազմակերպել, անհնար է առանց Վասպուրականի»,- համոզված պնդում է Ռուբենը:

Ռուբենը փորձում է հերթական անգամ փաստել, որ Հայաստան երկիրը բնավ չի զլացել իր զավակների պաշտպանության համար, և իր զավակներն են, որ չեն ըմբռնել հայրենիքի աստվածատուր հարմարությունները: Հայ քաղաքական գործիչն առավելապես կարևորում է Հայկական լեռնաշխարհի կենտրոնում՝ Արարատի երկու փեշերին ընկած Բագրևանդ և Սուրմալու գավառների ռազմավարական նշանակությունը: Այս շրջանները մշտապես կռվախնձոր են եղել Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև: Թուրքիայի համար այդ տարածքներն այսօր թե՛ տնտեսական, թե՛ ռազմավարական նպատակներ են հետապնդում: Եթե այս գավառները լինեն Հայաստանի կազմում, ապա դրանով, ըստ Ռուբենի, կլուծվեն մի շարք խնդիրներ.

«1. Երբ Մասիսի կողերը ազատ Հայաստանին պատկանեն, վերջ պիտի գտնեն ռուսական ու անգլիական (այժմ՝ թերևս ամերիկյան – Խ. Ս.) մրցակցութիւնները, որոնք իսկական արիւնահեղութիւնների պատճառներ են:

2. Անհնարին ու ցնորական պիտի դառնան պանթուրանիզմի ձգտումները, և իբրև սրա հետևանք, հնարաւոր պիտի լինի ներդաշնակ կենակցութիւնը հարևան թուրքի և ադրբեջանցու հետ:

3. Հայաստանը կունենայ տնտեսական ու ռազմական ելումուտքի ճանապարհներ, կը դառնայ «նիթապէս» և «ֆիզիկապէս» առողջ:

4. Կը վերանայ կոտորածների մղձաւանջը:

5. Ոչ միայն Սուրմալուի և Բագրևանդի հայերը, այլ նաև Հայաստանի հավելեալ ժողովուրդը և գաղթականների մեծ մասը ապրելու տեղ կը գտնեն»[14]:

Այս գլխավոր կետերի կողքին Ռուբենը մատնանշում է Սուրմալուի և Բագրևանդի այլ առավելություններ ևս՝ Կողբի աղը, Սուրմալուի բամբակը, Ալաշկերտի հացը: Այդ պատճառով է, որ Մասիսի պատկանելությունը միայն մասնակի խորհրդանշական հարց չէ: Դրանից են կախված Հայաստանի ու հայ ժողովրդի բարգավաճումը և վերջնական խաղաղության հաստատումը:

Միացյալ Հայաստանի կազմում Էրզրումի ընդգրկումը ևս անփոխարինելի նշանակություն ունի: Տնտեսականից առավել Ռուբենը կարևորում է քաղաքի և նրա շրջակայքի ռազմական նշանակությունը: «Հայաստան միջ-ցամաքային ուղիներու վրայ» հիմնարար ուսումնասիրության մեջ հեղինակը Էրզրումի մասին գրում է. «Եթէ կ'ուզէք հասկնալ Թուրքիոյ հայաջինջ քաղաքականութեան բուն պատճառը, որոնեցէք Էրզրումի մէջ: Եթէ կ'ուզէք հասկնալ Ռուսիոյ շահախնդրութեան բուն պատճառը Հայկական հարցի վերաբերմամբ, պատճառները որոնեցէք Էրզրումի մէջ: Եթէ կ'ուզէք հասկնալ Անգլիոյ կամ Կենտրոնական Եւրոպայի (Արևմուտք – Խ. Ս.) ընդդիմութիւնը՝ Էրզրումի այլ աշխարհակալ պետութեանց ձեռք անցնելուն և կամ Թուրքիոյ ամբողջականութեան տեսակետները և կամ Անկախ Հայաստան ստեղծելու (այսօրվա օրակարգում՝ թերևս Հայոց ցեղասպանությունը ճանաչելու – Խ. Ս.) անոնց շահագրգռութիւնը, ինչպէս պատահեց Սևրի մէջ, նորէն պատճառները որոնեցէք Էրզրումի մէջ: Եթէ կ'ուզեք հասկնալ հայկական դիւցազներգութիւնը, մարտիրոսութիւնը, ձախողութիւնը և յաջողութիւնը, մի որոնէք այլ տեղ բացի Էրզրումէն»[15]: Ռուբենը Էրզրումի հարցի լուծումով է պայմանավորում Հայկական հարցի լուծումը:

Այսպիսով, հայ ականավոր պետական-քաղաքական գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանը պատմական անհրաժեշտություն է համարում Միացյալ Հայաստանի ծրագրի իրականացումը՝ դրանով պայմանավորելով ոչ միայն հայ ժողովրդի ազատ և անկախ զարգացումն ու հարատևումը պատմական հայրենիքում, այլև տարածաշրջանային անվտանգությունն ու խաղաղությունը:

Օգտագործված Աղբյուրներ

1- Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Աթէնք, 1930, էջ 129:
2- Քաղուածներ Հ.Յ. Դաշնակցութեան 10-րդ Ընդհ. Ժողովի որոշումներէն, Ժընև, 1925, էջ 23:
3- Տես «Դրօշակ», 1925, թիւ 3, էջ 72-77, թիւ 4, էջ 111-115:
4- Տես «Դրօշակ», 1925, թիւ 6, էջ 168-175:
5- Տես «Դրօշակ», 1926, թիւ 2, էջ 46-52:
6- Տես «Հայրենիք», Պոստոն, 1963, նոյեմբեր, էջ 4:
7- Տես «Դրօշակ», 1926, թիւ 1, էջ 5-11:
8- Տես «Դրօշակ», 1926, թիւ 3, էջ 67-71:
9- Տես «Դրօշակ», 1926, թիւ 4, էջ 105-110, թիւ 5, էջ 140-147:
10- «Դրօշակ», 1926, թիւ 5, էջ 146:
11- Տես «Դրօշակ», 1926, թիւ 7, էջ 208-214:
12- Տես «Դրօշակ», 1926, թիւ 11-12, էջ 299-306:
13- Տես «Հայրենիք», 1927, սեպտեմբեր, էջ 94-108:
14- Նույն տեղում, էջ 108:
15- Ռուբէն, Հայաստան միջ-ցամաքային ուղիներու վրայ, Պէյրութ, 1948, էջ 44:

2020 թ. արցախյան ընտրություններ. միասնական օրակարգի ընկալմամբ

Արա Պուլուզյան

2020 թ. գարնանը Արցախի Հանրապետությունում տեղի են ունենալու խորհրդարանական և նախագահական ընտրություններ: Համապետական այս ընտրությունները Արցախի անկախացումից հետո խորհրդարանական 7-րդ և նախագահական 6-րդ ընտրություններն են լինելու:

Համառոտ անդրադառնանք Արցախում մինչ այժմ տեղի ունեցած խորհրդարանական և նախագահական ընտրություններին:

Ռազմաքաղաքական բարդ պայմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին ընտրությունները կայացել են 1991 թ. դեկտեմբերի 28-ին: Ընտրություններն ունեցել են նաև երկրորդ փուլ, որն անցկացվել է 1992 թ. հունվարի 11-ին: 1995 թ. ապրիլի 30-ին տեղի են ունեցել ԼՂՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ: ԼՂՀ-ում ձևավորվել է 33 ընտրատարածք, որոնցում մեծամասնական ընտրակարգով ընտրվել են 2-րդ գումարման Ազգային ժողովի 33 պատգամավորները: Քվեարկությանը մասնակցել է ընտրացուցակներում ընդգրկված ընտրողների 73,9 %-ը:

2000 թ. հունիսի 18-ին անցկացվել են ԼՂՀ 3-րդ գումարման Ազգային ժողովի հերթական ընտրություններ: Այդ ընտրություններին մասնակցել է 51267 ընտրող, որը կազմել է ընտրողների ընդհանուր թվի (85866) 59,7 %-ը:

2005 թ. հունիսի 19-ին տեղի են ունեցել ԼՂՀ 4-րդ գումարման Ազգային ժողովի հերթական ընտրությունները: Դրանցից սկսած՝ Ազգային ժողովի ընտրությունները Արցախում տեղի են ունենում մեծամասնական և համամասնական ընտրակարգերով: 2005թ. մեծամասնական ընտրակարգով ընտրություններին 87949 ընտրական իրավունք ունեցողներից մասնակցել են 64841-ը կամ ընտրողների 73,3 %-ը, իսկ համամասնական ընտրակարգով ընտրություններին 90094-ից՝ 66998-ը կամ ընտրողների 74,4 %-ը:

ԼՂՀ 5-րդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները կայացել են 2010 թ. մայիսի 23-ին: Հանրապետության՝ մեծամասնական ընտրակարգով ընտրություններին 95886 ընտրական իրավունք ունեցողներից մասնակցել են 64329-ը կամ ընտրողների 67,1 %-ը, իսկ համամասնական ընտրակարգով ընտրություններին 98518-ից 66771-ը կամ ընտրողների

67,7 %-ը:

2015 թ. մայիսի 3-ին ԼՂՀ ԱԺ ընտրություններին մասնակցել է 72296 ընտրող (102042-ից) կամ ընտրական իրավունք ունեցողների 70,85 %-ը:

ԼՂՀ նախագահի առաջին ընտրությունը տեղի է ունեցել 1996 թ. նոյեմբերի 24-ին: Երեք թեկնածուներից առավելագույն ձայներ ստացել է Ռոբերտ Քոչարյանը:

ԼՂՀ նախագահ Ռ. Քոչարյանի՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ նշանակվելու պատճառով ԼՂՀ նախագահի արտահերթ ընտրությունները տեղի են ունեցել 1997 թ. սեպտեմբերի 1-ին: Այդ ընտրություններին 90137 ընտրական իրավունք ունեցողներից մասնակցել են 76257-ը կամ ընտրողների 84,6 %-ը: Առաջադրված երեք թեկնածուներից ընտրվել է Արկադի Ղուկասյանը:

ԼՂՀ Նախագահական երրորդ ընտրությունները կայացել են 2002թ. օգոստոսի 11-ին, որոնց 85523 ընտրողներից մասնակցել են 64736-ը (75.7 %): Առաջադրվել էին 4 թեկնածուներ: 53746 (88,95 %) ընտրող քվեարկել է գործող նախագահ Արկադի Ղուկասյանի օգտին:

2007 թվականի հուլիսի 19-ին Արցախում անցկացվել են նախագահական հերթական ընտրություններ: 92114 ընտրական իրավունք ունեցողներից քվեարկել են 71286-ը (77,4 %): Առաջադրվել էին 5 թեկնածուներ: Քվեարկության արդյունքներով նախագահ է ընտրվել Բակո Սահակյանը: Ուշագրավ է, որ այս ընտրություններին որպես նախագահի թեկնածու մասնակցել է նաև Մասիս Մայիլյանը, ով հետագայում նշանակվել է ԱՀ ԱԳ նախարար:

2012թ. հուլիսի 19-ի ԼՂՀ նախագահի հերթական՝ 5-րդ ընտրության արդյունքներով ԱՀ նախագահի պաշտոնում վերընտրվել է գործող նախագահ Բակո Սահակյանը: Ընտրություններին մասնակցել է 72823 ընտրող (73,42 %). ընտրողների թիվը 99190 էր: Առաջադրվել էին 3 թեկնածուներ: Նախագահի թեկնածուներից էր նաև Վիտալի Բալասանյանը, ով 2016 թ. նշանակվել է ԱՀ Անվտանգության խորհրդի քարտուղար:

2017 թ. փետրվարին Արցախում ընդունվել է նոր Սահմանադրություն: Ըստ ԱՀ Սահմանադրության 109-րդ հոդվածի՝ Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվում է Հանրապետության նախագահի ընտրությունների հետ միաժամանակ:

2017 թ. ամռանն ավարտվել է Բակո Սահակյանի պաշտոնավարման շրջանը, իսկ, ըստ Սահմանադրության անցումային դրույթների, մինչև հերթական խորհրդարանական ընտրությունների անցկացումը Ազգային ժողովը պետք է ընտրի ԱՀ նախագահ. ընտրվել է գործող նախագահ Բակո Սահակյանը:

Դաշնակցությունը դեմ էր Արցախի՝ 2017 թ. ընդունված Սահմանադրությանը: Հիմնավորումներից մեկն էլ նշյալ երկու ընտրությունների միաժամանակ անցկացումն էր: Իհարկե, գործող Սահմանադրության մեջ ամրագրվել է տարիներ շարունակ Դաշնակցության կողմից պաշտպանված 100 %-անոց համամասնական ընտրությունների անցկացման դրույթը, սակայն նման մեծ մասշտաբի միաժամանակյա ընտրությունները ծանր բեռ են Արցախի քաղաքական դաշտի համար: Պատահական չէ, որ առաջիկա ընտրություններին մասնակցելու են 15-ից ավելի կուսակցություններ և նախագահի 10-ից ավելի թեկնածուներ:

Ինչպես ակնհայտ է դառնում համապետական ընտրությունների պատկերից, Արցախում նախագահական ընտրությունները քվեարկողների առավել մեծ մասնակցություն են ապահովում, քան խորհրդարանականը: Դա նախևառաջ բխում է Արցախի պետական համակարգում նախագահական ինստիտուտի կարևորությունից, որը պայմանավորված է համակարգի կենտրոնաձիգ կառավարման բնույթով: Պետական ինստիտուտների հիմնական որոշումների վրա որոշիչ է նախագահի և նրա աշխատակազմի ուղղակի ազդեցությունը:

2017 թվականից Արցախում գործող Սահմանադրությունն ավելի է բարդացնում վերը նշված խրթին իրավիճակը: Սա ևս մի պատճառ է, որն ավելի է թեժացնում Արցախում կայանալիք ընտրությունների մթնոլորտը:

Քաղաքական ներքին մթնոլորտի վրա իր ազդեցությունն է ունեցել 2018 թ. գարնանը ՀՀ-ում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով ստեղծված իրավիճակը: Դրա հետևանքով շատերի մոտ առաջացել է քաղաքականությամբ զբաղվելու տրամադրություն, մասամբ էլ՝ պատեհապաշտություն, առիթից օգտվելու և պետական համակարգում ներգրավվելու մասնավոր շահադիտությամբ:

Պատահական չէ, որ 2018 թ. ՀՀ իրադարձություններից հետո՝ մայիս-հունիս ամիսներին, Ստեփանակերտում տեղի ունեցած իրադարձությունների մասնակիցներն այսօր ներգրավվել են զանազան կուսակցություններում կամ հիմնադրել սեփականը: Այս համապատկերում չպետք է մոռանալ բանակի նախկին հրամանատար Սամվել Բաբայանի վերադարձը Արցախի քաղաքական դաշտ: Վաղաժամկետ ազատ արձակված հրամանատարը ՀՀ-ում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո առիթը պատեհ է համարել և, շուրջը համախմբելով Արցախի իշխանություններից դժգոհ ընտրազանգվածին, փորձում է իր տեղն ապահովել Արցախի քաղաքական դաշտում:

ՀՅ Դաշնակցությունը դեռևս 2018 թ. ամռանից կարևորել է երկրում քաղաքական կայունության անհրաժեշտությունը, որն ուղղակիորեն կապված է անվտանգության հետ: Այդ ժամանակվանից էլ տարբեր քաղաքական ուժերի հետ տեղի են ունեցել խորհրդակցություններ, և հենց այդ ժամանակ էլ ՀՅԴ-ն իր առաջարկությունների փաթեթն է ներկայացրել ԱՀ նախագահին:

Արցախում առկա քաղաքական կուլիսների հետևում զգալի է նաև Հայաստանի իշխանությունների ուղղակի կամ անուղղակի դերակատարությունը: Այս հարցն օգտագործվում է երկկողմ ձևաչափով: Արցախում առկա քաղաքական ուժերը, Հայաստանի իշխանությունների նկատմամբ տարբեր մոտեցումներ ունենալով, փորձում են ապահովել ընտրազանգված, ինչպես որ Հայաստանի իշխանական ուժերն ու ընդդիմությունը միավորներ են վաստակում Արցախի խնդիրների նկատմամբ տարբեր կեցվածքներ որդեգրելով: Այսպիսով, քաղաքական վերադասավորումների հարցը ստանում է բազմաշերտ

և բազմաբովանդակ բնույթ:

Սակայն վերը նշվածից առավել կարևոր և Արցախյան հիմնախնդրի լուծման տեսակետից առանցքային է Արցախում կայանալիք ընտրությունների նշանակությունը՝ միջազգային առումով: Արցախյան հարցի շուրջ բանակցություններում թե՛ Արցախի և թե՛ Հայաստանի առանցքային պահանջներից մեկը արցախյան կողմի լիիրավ մասնակցությունն է բանակցային գործընթացին, իսկ Արցախի կողմից բանակցողը պետք է ունենա միջազգային առումով ընդունելի լեգիտիմության մակարդակ: Իր հերթին լեգիտիմության ընդունելի չափանիշն այլ բան չէ, քան ժողովրդավարական հիմունքներով անցկացված ընտրություններով ընտրվելը: Այստեղ չի կարելի աչքաթող անել նաև ժողովրդի մասնակցության բարձր տոկոսի անհրաժեշտությունը, ինչը հաճախ թյուրիմացաբար հակադրվում է մրցակցային ընտրություններին: Կարևորը այնպիսի համաձայնեցված թեկնածուի շուրջ համախմբումն է, ով կկարողանա ապահովել ժողովրդի վստահության բարձր մակարդակ, որին համապատասխան միջազգայնորեն կներկայացնի առավել կայուն մանդատ:

Դեպքերի զարգացումը հանգեցրեց նրան, որ Արցախի գրեթե բոլոր ազդեցիկ դեմքերն ու քաղաքական ուժերը որոշեցին իրենց թեկնածուներն առաջադրել ԱՀ նախագահական ընտրություններում: Այս երևույթը

պարունակում էր անձնական նկրտումներին հագուրդ տալու և ապա թշնամական մթնոլորտի առաջացման վտանգ: Այդ իսկ պատճառով հուլիսի 7-ին կայացած ՀՅԴ Արցախի շրջանային ժողովը հանձնարարել էր նորընտիր Կենտրոնական կոմիտեին բազմակողմանի բանակցություններ սկսել ազգային միասնական օրակարգի հիման վրա նախագահի համաձայնեցված թեկնածու առաջադրելու շուրջ:

ՀՅԴ Արցախի ԿԿ-ն 2019 թ. սեպտեմբերին պաշտոնապես հայտարարեց բանակցություններ սկսելու մասին: Բանակցություններն ընթացան երկու փուլով: Նախ հանդիպումներ տեղի ունեցան Արցախում գրանցված ավելի քան 15 կուսակցությունների ներկայացուցիչների հետ: Կուսակցությունները համամիտ էին Դաշնակցության մտահոգություններին, որի արդյունքում ձևավորելով միասնական օրակարգ՝ ՀՅԴ Արցախի ԿԿ-ն բանակցությունների երկրորդ փուլի մեկնարկը տվեց՝ այս անգամ հանդիպելով ԱՀ նախագահի 5 հավանական թեկնածուների հետ: Ինչպես տարեվերջյան հարցազրույցում նշել է ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, «նախաձեռնության հիմնական նպատակն էր համախմբում ստեղծել՝ հանուն մեր ներքին միասնության, մեր առջև ծառացած մարտահրավերների դիմակայման, հաղթահարման և հանուն մեր ապագայի զարգացման: Այդ առումով անհրաժեշտ է միասնական օրակարգ ունենալ և դրա շուրջ համախմբվել: Սակայն նախաձեռնությունն ամբողջական արդյունավետություն չունեցավ: Մենք մասնակի հաջողություններ արձանագրեցինք, որոնք հիմնականում վերաբերում են միասնական օրակարգի շուրջ ընդհանուր տեսակետներ ունենալուն և համախոհության մթնոլորտին: Այդ օրակարգի շուրջ համաձայնեցված թեկնածու ունենալու փաստը այդպես էլ չկայացավ, և դրա հեռանկարները, եթե ամբողջովին սպառված չեն, ապա այս հանգրվանում գոնե՝ գրեթե հնարավոր չեն»:

Այսպիսով, 2019 թ. դեկտեմբերի 15-ին տեղի ունեցավ ՀՅԴ Արցախի արտակարգ շրջանային ժողով, որտեղ ճշտվեցին ՀՅԴ նախընտրական ծրագրային դրույթները, և որոշվեց առաջադրել նախագահի սեփական թեկնածու: Այս ամենով հանդերձ՝ դեռևս առկա են մտահոգություններ. անթույլատրելի են հասարակության մեջ անառողջ մթնոլորտի ձևավորումը, պառակտող և թշնամանք սերմանող «սև» քարոզչությունը: Այս հարցին 2020 թ. հունվարի 10-ին անդրադարձավ նաև Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը Արցախի քաղաքական ուժերի և նախագահի հավանական թեկնածուների հետ հանդիպման ժամանակ :

2020 թ. տարեմուտը Արցախը դիմավորեց քաղաքական այսպիսի մտահոգություններով լի մթնոլորտում: Պետք է հուսալ, որ քաղաքական պատասխանատվության հավակնող յուրաքանչյուր անձ կամ ուժ կգիտակցի, որ, Արցախի պետականությանը, հայրենիքի անվտանգությանը և հայ ժողովրդի հաղթանակների ամրապնդմանն ի խնդիր, 2020 թ. Արցախում կայանալիք համապետական ընտրությունները պետք է առիթ դառնան փաստելու միասնականության և վճռականության առավել բարձր մակարդակը: ■

Ջավախքի հիմնահարցերը (մաս 1-ին)

Վրեժ Նահատակյան

Ներկայիս Վրաստանի հարավային, հայաբնակ Սամցխե-Ջավախք-Ծալկա[1] (այսուհետ՝ Ջավախք) տարածաշրջանի (ներառյալ Բորժոմի շրջանը) մակերեսը 7 շրջաններով կազմում է 7474,1 կմ² (մոտ 7,5 հազ. կմ²):

Եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ Վրաստանի՝ ՀՀ-ին սահմանակից Դմանիսի, Բոլնիսի և Մառնեուլի շրջաններում ապրում են գերազանցապես ադրբեջանցիներ (կովկասյան թաթարներ), ապա պարզորոշ է դառնում, որ Ջավախքն այսօր ՀՀ-ին սահմանակցող միակ քրիստոնյա հարևանն է: Հետևաբար հայկական զույգ հանրապետությունների՝ արտաքին աշխարհ (ծովային նավահանգիստ) ելքի տեսանկյունից գերազանցապես հայաբնակ Ջավախքի ռազմավարական դիրքն ունի կենսական նշանակություն՝ լինելով դեպի ծովային նավահանգիստներ տանող ամենակարճ և ամենաանվտանգ ուղին: Ջավախքը նաև ունի իր հայրենի հողի վրա ապրող հայության ստվար զանգված: Ըստ այդմ՝ թե՛ ռազմավարական, թե՛ բարոյական առումներով հույժ կարևոր է վերլուծել Ջավախքում և վերջինիս շուրջ ընթացող խմորումները, տալ ճիշտ ախտորոշումներ և ուրվագծել ապագայի զարգացումները:

Ժողովրդագրություն

Փաստենք, որ խորհրդային տարիներին Վրացական ԽՍՀ-ում ծնելիության ամենաբարձր գործակիցը գրանցվել է Ջավախքի տարածաշրջանում, որը շուրջ երկու անգամ բարձր էր ՎԽՍՀ-ի մյուս շրջանների ցուցանիշից: Այդուհանդերձ, ազգային և տնտեսական ոլորտներում առկա ոչ բարենպաստ պայմաններում արտագաղթի բարձր ցուցանիշները ծանրագույն ազդեցություն են ունեցել Ջավախքի հայության ժողովրդագրության վրա, ինչի հետևանքով տասնամյակների ընթացքում Ջավախքում ժողովրդագրական աճ գրեթե չի գրանցվել, իսկ հետխորհրդային տարիներին ջավախքահայությունն ապրում է ժողովրդագրական ձմեռ, և նկատելի են դառնում հայության թվաքանակի նվազման միտումները: Պատկերն առավել ակնառու ներակայացնելու համար հարկ ենք համարում բերել որոշ պաշտոնական վիճակագրական տվյալներ:

Սամցխե-Ջավախք-Ծալկայի բնակչության թվաքանակը և ազգային կազմը 2002 թ. դրությամբ [2]

Նահանգ/շրջան	Ընդհանուր թիվը	Վրացիներ	Հայեր	Ադրբեջանցիներ	Այլ ազգեր
Սամցխե-Ջավախք-Ծալկա	228486 (100 %)	92505 (40,5 %)	124831 (54,6 %)	2051 (0,9 %)	8736 (3,8 %)
1. Ադիգենի շրջան	20752 (9.1%)	19860 (95,7 %)	698 (3,4 %)	17 (0,1 %)	169(0,8 %)
2. Ախալցխայի շրջան	46134 (20.2)	28473 (61,7 %)	16879 (36,6 %)	13 (0 %)	645 (1,4 %)
3. Ասպինձայի շրջան	13010 (5,7 %)	10671 (82 %)	2273 (17,5 %)	0 (0 %)	60 (0,5 %)
4. Բորժոմի շրջան	32422 (14,2 %)	27301 (84,2 %)	3124 (9,6 %)	24 (0,1 %)	1930 (6 %)
5. Ախալքալաքի շրջան	60975 (26,7 %)	3214 (5,3 %)	57516 (94,3 %)	3 (0 %)	235 (0,4 %)
6. Նինոծմինդայի (նախկինում՝ Բոգդանովկայի) շրջան	34305 (15 %)	476 (1,4 %)	32857 (95,8 %)	2 (0 %)	958 (2,8 %)
7.Ծալկայի շրջան	20888 (9,1 %)	2510 (12 %)	11484 (55 %)	1992 (9,5 %)	4739 (22,7 %)

Սամցխե-Ջավախք-Ծալկայի բնակչության թվաքանակը և ազգային կազմը 2014 թ. դրությամբ [3]

Նահանգ/շրջան	Ընդհանուր թիվը	Վրացիներ	Հայեր	Ադրբեջանցիներ	Այլ ազգեր
Սամցխե-Ջավախք-Ծալկա	179353 (100 %)	86300 (48,1 %)	88500 (49,3 %)	1300 (0,7 %)	3100 (1,7 %)
1. Ադիգենի շրջան	16462 (9,2 %)	16000 (97,2 %)	400 (2,4 %)	*	100 (0,6 %)
2. Ախալցխայի շրջան	38895 (21,7 %)	26400 (67,9 %)	12000 (30,9 %)	*	300 (0,8 %)
3. Ասպինձայի շրջան	10372 (5,8 %)	9000 (86,8 %)	1400 (13,5 %)	*	*
4. Բորժոմի շրջան	25214 (14,1 %)	22000 (87,3 %)	2200 (8,7 %)	*	1000 (4 %)
5. Ախալքալաքի շրջան	45070 (25,1 %)	3100 (6,9 %)	41900 (93 %)	*	100 (0,2 %)
6. Նինոծմինդայի (նախկինում՝ Բոգդանովկայի) շրջան	24491 (13,7 %)	1000 (4,1 %)	23300 (95,1 %)	*	200 (0,8 %)
7.Ծալկայի շրջան	18849 (10,5 %)	8800 (46,7 %)	7300 (38,7 %)	1300 (6,9 %)	1400 (7,4 %)

Վրաստանում անցկացված երկու (2002 և 2014 թթ.) պաշտոնական մարդահամարների տվյալների համաձայն՝ ջավախահայության թիվը վերջին 12 տարիների համեմատ նվազել է շուրջ 36331-ով (29,1 %), շուրջ 2-3 անգամ ընկել է նաև ծնելիության գործակիցը: Մասնավորապես, օրինակ, Ախալքալաքի շրջանի հայության թիվը նվազել է 15616-ով կամ 27,2 %-ով՝ 57516-ից հասնելով 41900-ի (1989 թ. ԽՍՀՄ պաշտոնական մարդահամարի տվյալներով՝ 63092 հայ), Նինոծմինդայինը՝ 9557-ով կամ 29,1 %-ով՝ 32857-ից հասնելով 23300-ի (1989 թ. տվյալներով՝ 33964 հայ): Նույն կերպ նվազել է ինչպես Ախալցխայի երբեմնի հայաշատ շրջանի հայության թվաքանակը՝ 16879-ից հասնելով 12000-ի (նվազել է շուրջ 4879-ով կամ 29 %-ով. 1989 թ. տվյալներով՝ Ախալցխայի շրջանում ապրել է 23469 հայ), այնպես էլ հայաբնակ և երբեմնի հունաբնակ Ծալկայի շրջանինը՝ 11484-ից հասնելով շուրջ 7300-ի (նվազել է շուրջ 4184-ով կամ 36,4%-ով. 1989 թ. տվյալներով՝ Ծալկայի շրջանում ապրել է 12671 հայ): Փաստենք նաև, որ հիմնականում դեպի Հունաստան ներգաղթած հույների բնակավայրերի վերաբնակեցման հետևանքով Ծալկայի շրջանում կտրուկ աճել է վրացական տարրի (սվաններ, աջարներ և այլն) թիվը՝ 1613-ից (1989 թ.) հասնելով 8800-ի: Արդյունքում եթե, օրինակ, Ծալկայի հայության տոկոսային հարաբերակցությունը շրջանում 2002 թ. 55 % էր (բնակչության թվի կեսից ավելին), ապա 2014 թ. այն կազմել է 38,7 %:

Նվազել է նաև ջավախահայության տեսակարար կշիռը. եթե նախկինում հայերը կազմում էին Սամցխե-Ջավախք նահանգի և Ծալկայի շրջանի ողջ ազգաբնակչության 54,6 %-ը, ապա նոր (2014 թ.) ցուցանիշներով այն չի հատում 50 %-ի սահմանագիծը (49,3 %):

Այդուհանդերձ, Վրաստանի պաշտոնական վիճակագրական այս ցուցանիշներին պետք է մոտենալ որոշակի վերապահումներով, քանի որ դեռևս հայտնի չէ, թե պաշտոնական վիճակագրությունն ինչպես է անդրադարձել Ջավախքում բնակվող, սակայն Վրաստանի քաղաքացիություն չունեցող (հիմնականում՝ ՀՀ և ՌԴ քաղաքացիություն ունեցող) անձանց թվաքանակի վրա, իսկ այդպիսի կարգավիճակով հայության թիվը, ոչ պաշտոնական հաշվարկների և տարբեր հրապարակումների համաձայն, հասնում է տասնյակ հազարների: Այստեղ պետք է նշել նաև հակառակ երևույթի մասին. զգալի թիվ են կազմում այն ջավախահայերը, ովքեր պահպանել են Վրաստանի քաղաքացիությունը, հաշվառված են իրենց բնակավայրերում, սակայն չեն ապրում այնտեղ: ■

Օգտագործված Աղբյուրներ

1- Երկրի վարչատարածքային բաժանումներին համապատասխան՝ տարածաշրջանն այժմ ներկայանում է 1994 թ. կազմավորված Սամցխե-Ջավախք նահանգի և վերջինիս սահմանակից ու հարևան Քվեմո Քարթլի նահանգի կազմի մեջ մտնող Ծալկայի շրջանի տեսքով: Սամցխե-Ջավախք նահանգը ներառում է Ախալցխայի և Ախալքալաքի նախկին գավառները, որոնք խորհրդային տարիներին բաժանվեցին շուրջ 5 շրջանների: Սամցխե-Ջավախք նահանգի Սամցխեի (Մեսխոնիք, Ախալցխայի գավառ) հատվածը ներկայումս բաժանված է Ադիգենի (մակերեսը՝ 799,5 կմ2), Ախալցխայի (1010,3 կմ2), Ասպինձայի (Ասպնջակ, 825,3 կմ2) շրջանների: Ջավախքի (Ախալքալաքի գավառ) հատվածն իր հերթին վարչականորեն բաժանված է Ախալքալաքի (1,200 կմ2) և Նինոծմինդայի (նախկին Բոգդանովկա, 1,400 կմ2) շրջանների: Նահանգի կազմում չներառված Ծալկայի շրջանի մակերեսը կազմում է 1,050 կմ2: Ներկայիս Սամցխե-Ջավախք նահանգի մեջ է ներառված նաև նախկին Գորիի գավառի մեջ մտնող Բորժոմի առողջարանային շրջանը (1,189 կմ2), այդուհանդերձ, Ջավախքի հետ պատմաաշխարհագրական կապ ունեն հատկապես շրջանի հարավային 4 հայաբնակ (Տարածողուի (Կարմրավանք), Մոլիթ, Չխարուլա և Բալանթա (մասամբ՝ աջարաբնակ)) գյուղերը:

2- Ըստ Վրաստանում 2002 թ. անցկացված մարդահամարի պաշտոնական տվյալների:

3- Վրաստանի ընդհանուր մարդահամարի տվյալների մեջ ազգային կազմն ըստ առանձին շրջանների ներկայացված չէ. դրանք հաշվարկվել են մեր կողմից, ուստի առանձին շրջանների ազգային կազմը ներկայացնող կլորացված թվերի հանրագումարը կարող է փոքր-ինչ տարբերվել այդ նույն շրջանների՝ Վրաստանի պետական վիճակագրական մարմինների ներկայացրած ամբողջական թվերից:

Աստղանիշները նշանակում են, որ տվյալ բնակչության թիվը, ըստ մեր հաշվարկների, փոքր է հարյուրից:

Նախիջեվանը պանթյուրքական գաղափարախոսության համատեքստում

Անի Մելքոնյան

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆ
ԹՈՒՐՔԻԱ
ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԻՀ
ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Երևան
Նախիջևան
Ստեփանակերտ
Գյումրի
Վանաձոր
Իջևան
Դիլիջան
Սևան
Աշտարակ
Արմավիր
Արտաշատ
Արարատ
Եղեգնաձոր
Վայք
Գորիս
Սիսիան
Կապան
Մեղրի
Ջուլֆա
Դարբաս
Մարտունի
Շուշի
Ասկերան
Հադրութ
Ֆիզուլի
Ջաբրայիլ
Դիզափայտ
Գանձակ
Բաքու
Թբիլիսի
Կարս
Էրզրում
Մարաղա
Թավրիզ
Խոյ
Սալմաստ
Ուրմիա
Սանանդաջ
Սեհանդ լ.
Արագած լ. 4090
Ս. Արարատ լ. 5165
Փ. Արարատ լ. 3925
Սևանա լիճ
Ուրմիայի լիճ
Վանա լիճ
Դոզուբայազետ (Բայազետ)
Թուզլուջա (Կողբ)
Իգդիր
Ղարաբաղ
Նուրդուզ
Ղարաբաղ
Ղարաբաղ
Ղարաբաղ

Նրան չհաջողվեց Նախիջևանը կցել Թուրքիային, բայց Հայաստանի ու Ադրբեջանի խորհրդայնացումից հետո ամեն բան արեց, որ այն անցնի Ադրբեջանի վերահսկողության տակ: 1921 թ. բոլշևիկա-քեմալական Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով գծվեց ներկայիս հայ-թուրքական սահմանը, և Նախիջևանի խնամակալը դարձավ Ադրբեջանը[10]: Նախիջևանը ցամաքային Ադրբեջանի հետ ուղղակի կապ չուներ, բայց դարձավ այդ պետության տարածքի մի մաս:

Դրանից հետո Աթաթուրքն ամեն գնով ձգտում էր սահման ունենալու Նախիջևանի հետ, ինչը կարողացավ իրականացնել 1934 թ.: Թուրքական haberler.com կայքը 2017 թ. մարտին հրապարակում էր արել, որում նշվում էր, թե Թուրքիայի և Նախիջևանի միջև ներկայումս գոյություն ունեցող սահմանային փոքր հատվածը հենց Մուստաֆա Քեմալ Աթաթուրքն է ժամանակին գնել իր սեփական միջոցներով[11] Նախիջևանի հետ սահման ունենալու վերաբերյալ իրանագետ Վարդան Ոսկանյանը նշում է. «Այդ ժամանակ տեղի է ունեցել տարածքի անհամաչափ փոխանակում. Իրանի պետությունը Թուրքիայից ստացել է երեք անգամ ավելի մեծ տարածք Կոտուրի լեռներում՝ հատկացնելով այս փոքր կտորը, որի միջոցով ռազմավարական առումով փաստացիորեն Թուրքիան ցամաքային կապ է հաստատել Նախիջևանի հետ[12] : Դա հնարավորություն տվեց պանթուրքական գաղափարախոսությունն արթուն պահել, որի իրականացման ճանապարհը Թուրքիայի և Նախիջևանի միջև եղած այդ միջանցքն էր: Քեմալականների հաջորդ թիրախը Մեղրին էր կամ Սյունիքը. Թուրքիան Մեղրիի միջոցով ցամաքային ճանապարհ կունենար դեպի Ադրբեջան, որից հետո ծրագիրն ուղղվելու էր դեպի Ռուսաստան և Չինաստան:

Հարկ է նշել, որ երբ Նախիջևանն անցավ Ադրբեջանի վերահսկողության տակ, իշխանությունները սկսեցին վարել Նախիջևանի հայաթափման և այնտեղից հայկական հետքերի վերացման քաղաքականություն, իսկ Թուրքիան գնալով ուժեղացրեց դիրքերն այնտեղ՝ այդպես այն դարձնելով սպառնալիք Հայաստանի Հանրապետության դեմ և պլացդարմ պանթյուրքիզմի համար:

Թուրքիան երբեք էլ չի հրաժարվել պանթյուրքական գաղափարներից, որոնք տարբեր ժամանակներում տարբեր ուժգնությամբ դրսևորվել են: Թուրքիայի իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության գաղափարախոս Ահմեդ Դավութօղլուն իր «Ռազմավարական խորություն. Թուրքիայի միջազգային դիրքը» գրքում առաջ է քաշում նեոօսմանիզմի գաղափարախոսությունը, որը ներառում է նաև պանթյուրքիզմի գաղափարախոսության տարրեր[13]: Իսկ 2009 թ. հոկտեմբերի 3-ին Նախիջևանում անցկացվեց թյուրքալեզու երկրների գագաթնաժողով, որը հաստատեց «Թյուրքալեզու երկրների համագործակցության» համաձայնագիրը: Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլը հայտարարեց. «Նախիջևանը հարազատ ու թանկարժեք է և՛ Ադրբեջանի, և՛ Թուրքիայի համար... Թուրքիայի ու Ադրբեջանի սահմանը փոքր է, սակայն քաղաքական առումով 10-12 կիլոմետր երկարությամբ սահմանը խիստ կարևորություն ունի... աշխարհագրորեն Թուրքիան կապում է թյուրքական երկրների հետ»[14]: Հետագա տարիներին Թուրքիան էլ ավելի ակտիվացրեց իր քաղաքականությունը Նախիջևանի նկատմամբ: 2010 թ. օգոստոսի 16-ին Ադրբեջանի և Թուրքիայի միջև ստորագրվեց «Ռազմավարական գործընկերության և փոխադարձ օգնության պայմանագիր», որը նրանց հարաբերությունները բարձրացրեց ռազմական դաշինքի մակարդակի[15]: Նախիջևանում տեղի է ունենում ժամանակակից ռազմական տեխնիկայի և զինուժի ինտենսիվ կուտակում: Պարբերաբար անցկացվում են համատեղ զորավարժություններ, ընդ որում՝ թուրքական զինուժի գերակշռումով: Նույնիսկ 2018 թ. թուրքական «Sözcü» պարբերականում լրագրող Զեյնեփ Գյուրջանլին հոդված հրապարակեց, որում ասվում էր, որ Թուրքիան կարող է Նախիջևանում ռազմաբազա հիմնել[16], և եթե դա տեղի ունենա, Թուրքիան էլ ավելի կամրապնդի դիրքերը մեր տարածաշրջանում:

Այսպիսով՝ պանթյուրքիզմի սպառնալիքն իրական է նաև մեր օրերում: Նախիջևանն այդ առումով շատ կարևոր դիրքում է գտնվում, որը ռազմականացվում է Թուրքիայի և Ադրբեջանի կողմից՝ դառնալով պլացդարմ պանթյուրքիզմի համար: Նեոօսմանիզմի և պանթյուրքիզմի տեսության հիմքի վրա զարգացող Թուրքիան և Ադրբեջանն իրենց ռազմատենչ նկրտումներով իրական վտանգ են ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ տարածաշրջանի անվտանգության համար: Այդ վտանգը կանխելու համար անհրաժեշտ է ուշի-ուշով հետևել Նախիջևանում տեղի ունեցող զարգացումներին և ձգտել իրականացնելու համարժեք քայլեր:

Օգտագործված Աղբյուրներ

1- Տես Մկրտչյան Ս., Պանթյուրքական հոսանքները Իրանում, Եր., 2019, էջ 7:
2- Զարևանդ, Միացեալ, անկախ Թուրանիա կամ ինչ կը ծրագրեն թուրքերը, Աթենք, 1987, էջ 14:
3- Տես Թուրքիայի հին ու նոր հավակնությունների քարտեզը / http://akunq.net/am/?p=66843
4- Տես Զարևանդ, նշվ. աշխ., էջ 107:
5- Տես Բաբայան Դ., Արցախի հիմնախնդիրը և պանթյուրքիզմի գաղափարախոսությունը /http://www.noravank.am/upload/pdf/05.Davit%20Babayan_21_Dar_06-2011.pdf
6- Տես Из истории деармензации и Нахичеванского Края (1920-1921 гг.) / http://lraber.asj-oa.am/3619/1/1990-9(74).pdf
7- Զարևանդ, նշվ. աշխ., էջ 145:
8- Տես նույն տեղում, էջ 129:
9- Տես Misak-i Millî Beyannamesi; https://www.ttk.gov.tr/tarihveegitim/misak-i-milli-beyannamesi/
10- Տես Նախիջևանը՝ Ադրբեջանին, Կարսը՝ Թուրքիային. մարտ 16, 1921 /https://www.aniarc.am/2019/03/16/march-16-1921-russo-turkish-treaty/
11- Տես Atatürk, Kendi Parasiyla İran'dan Neden Toprak Satin Aldi / https://fotogaleri.haberler.com/ataturk-kendi-parasiyla-iran-dan-neden-toprak/
12- Նախիջևան. չհետազոտված փոփոխություններ, վտանգներ և առավելություններ /https://kentron.am/am/news/130180?fbclid=IwAR1OqON2hi7Ff7bVA_X5XnfEgZwvFMuNP9Kzy0Zopu51Oa7D1_sujms2s
13- Տես Davutoğlu A., Stratejik derinlik. Türkiye'nin uluslararasi konumu, Küre yayinlari, 2001:
14- Գաբրիելյան Հ., Թուրքիայի նախաձեռնությունները Նախիջևանում /http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4877
15- Տես Էվոյան Լ., «Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ օգնության մասին պայմանագիրը» թուրք-ադրբեջանական երկկողմ հարաբերությունների որակապես նոր փուլի սկիզբ /http://akunq.net/am/?p=31181&fbclid=IwAR0L3j9MOO6junw5h3iVt2dvhAWiXhTJDZOcPHiKys0g2Uk-TCQnJrM_hJc
16- Տես Gürcanli Z., Avrupanin amaci "Borç tahsilati" / https://www.sozcu.com.tr/2018/yazarlar/zeynep-gurcanli/avrupanin-amaci-borc-tahsilati-2604768/

Հայության խնդիրը թուրք պետականության ազգային քաղաքականության համատեքստում

Հայկազուն Ալվրցյան

«Եթե մի օր Թուրքիան քանդվի, ապա դա կլինի ոչ թե զենքի միջոցով, այլ ինքնության խնդրի»:

Հրանտ Դինք

2020թ. Հունվարի 14-ին Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի գլխավորությամբ տեղի է ունեցել Բարձրագույն խորհրդատվական խորհրդի հերթական նիստը, որի վերաբերյալ տարածվել է հետևյալ պաշտոնական տեղեկությունը. «Բարձրագույն խորհրդատվական խորհրդի անդամները նշել են, որ 1915 թ. դեպքերի վերաբերյալ Հայոց ցեղասպանության անհիմն պնդումները փորձում են օգտագործել այն շրջանակները, որոնք նպատակ ունեն բաժանել մեր սուրբ ազգի անդրդվելի միությունը և միասնականությունը: Ժողովում քննարկվել են երկրի ներսում և դրսում գտնվող հանրության մեջ առկա տեսակետները, այդ հարցում ապատեղեկատվության տարածումը խոչընդոտելուն ուղղված քայլերը և ճիշտ դիվանագիտական նախաձեռնություններով մեր երկրի դեմ կատարվող գործողությունները խոչընդոտելու հարցերը: Բծախնդիր կերպով քննարկվել են այն աշխատանքները, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել 1915 թ. դեպքերի հետ կապված իրականությանը չհամապատասխանող պնդումների դեմ: Ժողովի ժամանակ բարձրագույն խորհրդատվական խորհրդի անդամները ևս մեկ անգամ շեշտել են, որ մենք վճռական ենք մեր երկրի շահերի պաշտպանության, մեր միության և միասնականության պահպանման հարցերում»[1]:

Ակնհայտ է, որ այս, մեղմ ասած, անհանգստության հիմքում ընկած է Հայկական հարցը՝ առնվազն երկու բևեռացմամբ՝ ներքին և արտաքին:

Դժվար չէ ենթադրել, որ արտաքին խնդիրների կիզակետում Հայոց ցեղասպանության ճանաչումն է այլ պետությունների, հատկապես՝ ԱՄՆ-ի Կոնգրեսի զույգ պալատների կողմից, որը զուգորդվում է ներքին բևեռում առկա իրողությունների հետ, ինչն էլ անհանգստության բուն պատճառն է:

Հայկական հարցի լուծումը երիտթուրքերը տեսնում էին հայ ազգի բնաջնջման մեջ: Լայն առումով այս մոտեցումն ընդհանրական էր այլակրոն բոլոր ժողովուրդների, հատկապես՝ քրիստոնյաների հարցում և ուներ պատմական հիմքեր. այն առնվազն նույնքան հին է, որքան Օսմանյան կայսրության և նրա ժառանգորդ ու իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետության պատմությունը: Այս պետության մեջ հայերի բռնի իսլամացման քաղաքականությունը թեև ունի դարերի պատմություն, սակայն միայն 1894-1923 թվականների ընթացքում հայերի (նաև ոչ մուսուլման այլ ժողովուրդների) ցեղասպանությունը, կոտորածները, տեղահանությունն ու բռնի իսլամացումն արմատապես փոխեցին երկրի էթնոկրոնական պատկերը:

Այն, որ Թուրքիայի Հանրապետության հիմնումից մինչև 21-րդ դարի սկիզբը երկրի ղեկավարությունն ամեն կերպ փորձում էր հարցը փակ պահել, ի վերջո չունեցավ սպասված արդյունքը, քանի որ 1923 թ. ի վեր մահմեդական ժողովուրդներին ձուլելու, իսկ քրիստոնյաներին և մյուս ոչ մահմեդականներին իսլամացնելու կամ նրանցից ամեն գնով ազատվելու քաղաքականությունը կարելի է տապալված համարել:

Այսօր կարող ենք փաստել, որ Թուրքիայի իշխանությունները, չնայած գործադրած մեծ ջանքերին և պետականորեն ծրագրված ու իրականացված աննախադեպ հանցագործություններին, նույնիսկ ցեղասպանության ճանապարհով չկարողացան «լուծել» ազգային հարցը: էթնոկրոնական տեսակետից Թուրքիան միատարրությունից շատ է հեռու, ինչպիսին փորձում է ներկայանալ թե՛ երկրի ներսում, թե՛ առավել ևս միջազգային հանրությանը: Վերջին տարիներին միջազգային հեղինակավոր կազմակերպությունների անցկացրած հարցումների տվյալներով՝ Թուրքիայի բնակչության շուրջ կեսը[2] իրեն թուրք չի համարում: Այդ բազմամիլիոնանոց զանգվածը, բնականաբար, միատարր չէ նաև լեզվական առումով. Թուրքիայում բնակվող ժողովուրդները խոսում են 36 լեզուներով[3]:

Թուրքական իշխանությունների անհանգստության թերևս կարևորագույն պատճառներից է ցեղասպանությունից վերապրած կրոնափոխ հայության թիվը, որն այսօր, անգամ թուրքական պաշտոնական աղբյուրների համաձայն, կազմում է ավելի քան 4,5 միլիոն մարդ[4]: Էթնոկրոնական և լեզվամշակութային թուրքական խառնարանում կրոնափոխ հայերը ներկայանում են այլ ինքնություններով (քրդեր, թուրքեր, արաբներ, զազաներ, ասորիներ, լազեր և այլն): Նրանք հիմնականում բնակվում են Արևմտյան Հայաստանում, Փոքր Հայքում, Պոնտոսում, Կիլիկիայում և Թուրքիայի Հանրապետության այլ շրջաններում:

Դեպի Եվրոմիություն արևելումի համատեքստում ստանձնած՝ ժողովրդավարացման ինչ-ինչ հանձնառությունների ազդեցությամբ վերջին երկու-երեք տասնամյակում Թուրքիայում ջարդվեցին կամ խարխլվեցին բազմաթիվ տաբուներ, ինչի արդյունքում, ի թիվս մի շարք արգելված հարցերի, զանգվածային լրատվամիջոցներում և հնարավոր

հասարակական-քաղաքական ամբիոններում օրակարգային դարձավ Հայկական հարցն ընդհանրապես: Դրա համատեքստում կրոնափոխ հայության հարցը՝ որպես ազգային հարցի բաղադրիչ, ըստ էության զատել հնարավոր չէ, սակայն ճիշտ չէ նաև դրա լուծումը փնտրել միայն Հայկական հարցի լուծման շրջագծում. այն Թուրքիայի կառավարության ազգային քաղաքականության հետևանք է, և դրա լուծումն էլ ազգային քաղաքականության լուծման շրջագծում է: Վերջին տարիներին մի շարք հայտնի թուրք պետական-քաղաքական-հասարակական գործիչների, կուսակցությունների առաջնորդների, մտավորականների և լրատվամիջոցների ներկայացուցիչների ազգայնամոլական հայտարարությունները լավատեսության հիմքեր չեն տալիս, քանզի Թուրքիայի հասարակության արձագանքը դրանց նկատմամբ ուղղակի տագնապ ու վախ է ծնում ազգային փոքրամասնությունների վաղվա օրվա հարցում: Այդ վախը հիմնավորվում է երիտթուրքական-քեմալական «մեկ ազգ - մեկ լեզու» կարգախոսով ուղղորդվող հարյուրամյա ազգային քաղաքականությամբ, որը՝ որպես պետական ծրագիր, պաշտոնապես առաջին անգամ հանրությանն է ներկայացրել վարչապետ, հետագայում Թուրքիայի նախագահ Իսմեթ Ինոնյուն 1925 թ. ապրիլի 22-ին թուրքական օջախներից մեկում ունեցած ելույթում. «Մենք բացահայտ ազգայնականներ ենք: Ազգայնականությունը մեզ միավորած միակ պատճառն է: Թուրք մեծամասնության կողքին մյուս տարրերը ոչ մի ազդեցություն չունեն: Ինչ գնով ուզում է լինի, մենք թրքացնելու ենք մեր երկրում ապրողներին, իսկ թուրքերի և թրքականության դեմ դուրս եկողներին՝ ոչնչացնելու»[5]:

Ուշագրավ է, որ 2009 թ. մարտ ամսին Հաքքարիում դարձյալ վարչապետ, հետագայում դարձյալ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն այդ միտքը բանաձևեց առավել համառոտ. «Մեկ լեզու, մեկ ազգություն. ով որ չի հավանում, կթողնի-կգնա»[6]: Կարծում եմ՝ բոլորին, հատկապես՝ հայերին, պարզ է, թե «կթողնի-կգնա» արտահայտությունն իրականում ինչ բովանդակություն ունի: Ցեղասպանությունից հետո բոլոր այն դեպքերում, երբ հայերի թրքացումն ու իսլամացումն սպասված արդյունքը չէին տալիս, ընդունվում էին ճնշամիջոցներն ուժեղացնող աննախադեպ օրենքներ, որոնք ուղղված էին հատկապես հայերի և մյուս ոչ մուսուլման ժողովուրդների դեմ, ինչի հետևանքով նրանք հեռանում էին երկրից: Դրանցից պետք է առանձնացնել «20 դասակարգ զինակոչի» (1941-1942 թթ.) և «Ունեցվածքի հարկի մասին» օրենքները (1942-1944 թթ.):

Այսօրվա Թուրքիայի էթնոկրոնական պատկերը փաստում է, սակայն, որ թուրքական իշխանություններին չհաջողվեց վերջնականապես ազատվել ոչ մահմեդականներից, թեև բազմաթիվ հայեր, ասորիներ, հույներ և հրեաներ հեռացան երկրից: Ժողովուրդների՝ ինքնության պահպանման պայքարն ընդունում էր նորանոր ձևեր՝ ներքին համառ դիմադրությունից մինչև զինված պայքար (1920-ական թթ. քրդական ապստամբությունները, 1937-1938 թթ. Դերսիմի ապստամբությունը, վերջին չորս տասնամյակների քրդական զինված պայքարը), որոնք ուղղակի պատասխանն էին Թուրքիայի իշխանությունների ձուլման քաղաքականության:

Պետության կողմից մշակված, ծրագրված և բազմապիսի ճնշամիջոցներով գործադրվող իսլամացման-թրքացման քաղաքականությունը, անշուշտ, անհետևանք չմնաց. տասնամյակների ընթացքում շատերը ձուլվեցին, փոքր չէ նաև երկրից հեռացածների թիվը: Սակայն փաստ է նաև, որ այն ի վերջո հանգեցրեց միասնական թուրքական ինքնության պատրանքի փլուզմանը ներսից, ինչին նպաստեցին մի շարք ներքին և արտաքին գործոններ:

Ակնհայտ է, որ թուրքական հասարակության շրջանում հակահայ տրամադրություններ բորբոքելու ճանապարհով ներքին թշնամու կերպարի ստեղծումը և նրա դեմ ազգայնամոլական ճակատի համախմբումը հետապնդում են հեռահար քաղաքական նպատակներ:

Մոտակա քաղաքական նպատակը Թուրքիայի իսլամացած հայության (նաև այլ փոքրամասնությունների) մեջ ինքնության վերադարձի նկատվող զարթոնքը խեղդելն է: Տվյալ հարցում հայերին (ներառյալ իսլամացածները) թիրախ դարձնելը պայմանավորված է հայ-թուրքական հարաբերություններում պատմականորեն գոյացած կնճիռով, որն այսօր նորանոր երանգներ է ստանում մի կողմից՝ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման պահանջի, մյուս կողմից՝ Թուրքիայի իշխանությունների ժխտողական քաղաքականության, երրորդ կողմից՝ արևմտահայության ազգային զարթոնքի դրսևորումներով:

Օգտագործված Աղբյուրներ

1- https://www.iletisim.gov.tr/turkce/haberler/detay/cumhurbaskanligi-yuksek-istisare-kurulu-cumhurbaskani-erdogan-baskanliginda-toplandi14-02-2020

2- Տես Հայ Դատն այսօր, Թեհրան, 2005, էջ 46, տես նաև http://www.milligazete.com.tr/index.php?action=show&type=writers-news&id=17302

3- Թուրքիայում բնակվողների լեզուներին և աշխարհի բոլոր լեզուներին նվիրված մի համապարփակ ուսումնասիրություն հրապարակած www.ethnologue.com

կայքի՝ Թուրքիայի մասին զեկուցման համաձայն՝ Թուրքիայում խոսում են 36 լեզուներով՝ ներառյալ թուրքերենը:

4- Տես https://www.turkiye.gov.tr/icisleri-evrak-dogrulama:

5- Օքթայ Բարան, Իսմեթ Ինոնյուն, քեմալիզմը և ժողովրդավարությունը,

http://marksist.net/oktay_baran/ismet_inonu_kemalizm_ve_demokrasi.htm

6- «Milliyet» օրաթերթ, 13.03.2009:

Արևմտահայաստանի եկեղեցիները գյուլենականների նկրտումների առարկա:

Մելինե Անումյան | Թուրքագետ

Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին

Դեռևս 2012 թ. թուրքական զանգվածային լրատվամիջոցներով լուրեր տարածվեցին, համաձայն որոնց՝ գյուլենական համայնքի ներկայացուցիչները մտադիր են սեփականացնել ներկայիս Թուրքիայի Հանրապետության տարածքում գտնվող Սիիրթ (Սղերդ) նահանգի Էրուհ գավառի Դեհ թաղամասում պահպանված հայկական Սուրբ Աստվածածին եկեղեցին: Թեև եկեղեցու միայն պատերն էին կանգուն մնացել, սակայն այն ուխտավայր էր բազմաթիվ հայերի համար, ովքեր ամեն տարվա ապրիլին ուխտի էին գնում այնտեղ: Հարկ է նշել, որ Արևմտյան Հայաստանի տարածքում, թեկուզև ավերակ վիճակում, պահպանված յուրաքանչյուր հայկական եկեղեցի, վանք կամ մատուռ ոչ միայն հայկական հետք է, այլև աղոթատեղի կամ ուխտավայր՝ բացահայտ կամ ծպտյալ հայ մնացորդացի համար: Եվ այս համատեքստում խիստ կարևոր է նման սրբավայրերի՝ թեկուզև ավերված վիճակում պահպանումը: Սակայն ուղիղ մեկ տարի անց՝ 2013 թ. հուլիսին, եկեղեցու տարածքը տեղի գավառապետարանի կողմից վերջնականապես վաճառվեց գյուլենական շարժմանը մոտ կանգնած մի ընկերության: Գործարքին մասնակցել էին Սղերդի նահանգապետն ու Էրուհի գավառապետը: Տարածքը վաճառվել էր նախատեսվածից ցածր գնով: Վաճառված հողակտորը ներկայացվել էր ոչ թե որպես պատմամշակութային տարածք, այլ կանաչ գոտի, ինչը դյուրացրել էր գործարքը [1]:

Իսկ ո՞վ է Ֆեթհուլահ Գյուլենը, և ի՞նչ է նրա ղեկավարած համայնքը: Ֆ. Գյուլենը ծնվել է 1941 թ. ապրիլի 27-ին Էրզրումի (Կարին) Հասանքալե (Փասինլեր-Բասեն) գավառի Քորուջուք գյուղում: 4 տարեկանից սկսել է Ղուրան ուսումնասիրել: 1946 թ. տարրական կրթություն ստանալու նպատակով ընդունվել է գյուղի մզկիթին կից գործող մեդրեսեն (իսլամական հոգևոր դպրոց), սակայն ուսումն այստեղ կիսատ է մնացել, քանի որ հայրը, ով իմամ էր, պաշտոն էր ստացել Ալվար գյուղում: Տարրական կրթությունն ավարտին է հասցրել Էրզրումում: Առաջին անգամ քարոզել է 14 տարեկանում: 1965 թ. նշանակում է ստացել Քըրքլարելիում, իսկ հաջորդ տարի՝ Իզմիրում (Զմյուռնիա): Վերջինս դարձել է այն վայրը, որտեղ Գյուլենի գաղափարները սկսել են ավելի հստակ դառնալ, որոնք տարբերվում էին այլ հոգևորականների գաղափարներից: Իզմիրում կատարած աշխատանքներով նա ձգտել է իր գաղափարներին հաղորդակից դարձնել տեղի լիցեյների և համալսարանների երիտասարդներին: Այդ ժամանակաշրջանում գյուլենական շարժման ֆինանսական միջոցների առնչությամբ սկսված մի

Սաիդ-ի Նուրսին և Ֆեթհուլահ Գյուլենը

շարք հետաքննություններ որևէ արդյունք չեն ունեցել ապացույցների բացակայության պատճառով: 1980 թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումից հետո՝ 1981 թ., Գյուլենը թողել է հոգևորականի պաշտոնը: 1988-1991 թթ. ելույթներ է ունեցել մեծ քաղաքների մզկիթներում: Սույն աշխատանքների շնորհիվ հանրահայտ է դարձել Թուրքիայի իսլամական շրջանակներում: Այդ ժամանակաշրջանում ընդգրկվել է «Նուր» շարժման մեջ, որի շնորհիվ նրա կշիռը բավականին մեծացել է քաղաքական շրջանակներում: 1996 թ. ապրիլի 4-ին հանդիպում է ունեցել Ֆեների հունաց տիեզերական պատրիարքի հետ՝ միջկրոնական երկխոսություն ծավալելու նպատակով: Միջկրոնական երկխոսությանն ուղղված աշխատանքները շարունակվել են նաև հետագայում: Այսպես՝ 1998 թ. հունվարի 23-ին նա մոտ կեսժամանոց հանդիպում է ունեցել նաև Հռոմի պապ Հովհաննես-Պողոս Երկրորդի հետ: Գյուլենը ներկայումս բնակվում է ԱՄՆ-ում: Բազմաթիվ գրքերի և հոդվածների հեղինակ է: Իսլամական չափավորության գաղափարախոս է, ով կողմ է հանդուրժողականությանը և միջկրոնական երկխոսությանը:

Գյուլենի շարժումն ամենաազդեցիկ և հզոր իսլամական շարժումներից մեկն է Թուրքիայում: Այն ձևավորվել է 1960-ական թվականների սկզբին՝ որպես հիմք ընդունելով սուֆիզմը և Սաիդ-ի Նուրսիի հիմնադրած (1877-1961 թթ.) «Նուրջու» կամ «Նուր» («Լույս») ուսմունքը: Գյուլենի շարժումը դուրս է եկել Թուրքիայի սահմաններից և տարածվել համայն աշխարհում: Նա բազմաթիվ դպրոցներ է բացել աշխարհի տարբեր երկրներում: Գյուլենական համայնքն ունի հիերարխիկ կառուցվածք, որի գլուխ կանգնած է բնականաբար ինքը՝ Ֆեթհուլահ Գյուլենը: Գյուլենից անմիջապես հետո գալիս է խորհրդական ուլեմա դասը, որի կարևոր գործառույթներից է շարժման ուղեգծի մշակումը: Սույն դասին հետևում են տարբեր երկրներում գործող խմբերի համար պատասխանատու իմամները: Թուրքիայի համար պատասխանատու իմամին են ենթակա այստեղի քաղաքների պատասխանատուները: Ամեն քաղաք, ըստ մեծության, բաժանված է շրջանների, իսկ շրջանները՝ թաղամասերի, որոնցից յուրաքանչյուրը ղեկավարվում է իրավասուի կողմից: Ինչպես «Արդարություն և զարգացում կուսակցության իսլամական հենարանը» վերնագրով իր հոդվածում նշում է արաբագետ Արաքս Փաշայանը, «Ակտիվիստների առանձին խումբ են, այսպես կոչված, աբիները՝ ավագ եղբայրները, որոնք զբաղվում են սոցիալական անապահով շրջանակներից երիտասարդների հավաքագրմամբ: Վերջիններս ապահովվում են բնակարանով և կրթություն ստանալու հնարավորությամբ: Գյուլենի ուսումնական ծրագրերի շրջանակներում երիտասարդները ստանում են իսլամական կրթություն: Շարժման ֆինանսական աղբյուրները հստակ չեն, և հրապարակայնորեն դրանց մասին չի խոսվում [2]»:

Ուշագրավ է, որ միակ նահանգը Թուրքիայում, որտեղ գյուլենականները չեն կարողացել հաստատվել, հայկական Դերսիմն է (պաշտոնական անվանումը՝ Թունջելի[3]): Դա թերևս կարելի է բացատրել այն փաստով, որ Դերսիմը պատմականորեն գրեթե միշտ փակ տարածք է եղել, դրանով իսկ՝ առավել նվազ ենթակա արտաքին ազդեցություններին: Բացի այդ, ինչպես հայտնի է, այստեղի բնակչության հիմնական մասը ալևիներ են, որոնց համար, բնականաբար, խորթ են գյուլենական շարժման գաղափարները:

Նախկինում գյուլենական շարժման՝ բավականին մեծ թվով անդամներ որոշակի դիրքեր էին զբաղեցնում Թուրքիայի պետական կառույցներում, սակայն, 2012 թ. սկսած, Էրդողանի և Գյուլենի հարաբերությունները

սրվեցին: Նրանց հակամարտության պատճառ դարձավ նախ այն բացահայտումը, որ արեցին Գյուլենի հետ կապ ունեցող մի քանի դատախազներ, ըստ որի՝ 2009-2011 թթ. Թուրքիայի կառավարությունը գաղտնի բանակցություններ է վարել Քուրդիստանի բանվորական կուսակցության (ՊԿԿ) հետ: Բացի այդ՝ Գեզի զբոսայգու դեպքերի ժամանակ Գյուլենը հանդես եկավ բռնության քննադատությամբ և հարցը երկխոսության միջոցով կարգավորելու կոչով: Գյուլենականները որոշ դերակատարում ունեցան նաև 2013 թ. դեկտեմբերին հայտնի դարձած կոռուպցիոն սկանդալի՝ «Մեծ կաշառքի» բացահայտման գործում: Սկանդալ, որը կապվում էր նաև Էրդողանի որդու՝ Բիլալ Էրդողանի անվան հետ[4]: Ի վերջո, Գյուլենը և նրա ղեկավարած շարժումը մեղադրվեցին 2016 թ. հուլիսին Թուրքիայում կատարված ռազմական հեղաշրջման փորձի հետ անմիջական կապ ունենալու մեջ, ինչը հնարավորություն տվեց թուրքական իշխանություններին լայնածավալ հետապնդումներ սկսելու այդ համայնքին պատկանող պաշտոնյաների նկատմամբ: Թեև մինչ այդ Թուրքիայում արդեն սկսվել էր գյուլենականների որսը, սակայն 2016 թ. ռազմական հեղաշրջումից հետո գյուլենականներին հարելու մեջ մեղադրվողների ձերբակալությունների թիվը մեծապես աճեց: Ուշագրավ է, որ Էրդողան-Գյուլեն հակամարտությունը տեղիք տվեց նաև Թուրքիայի և ԱՄՆ-ի միջև հարաբերությունների լարվածության: 2016 թ. օգոստոսի 4-ին Ստամբուլի հանրապետական դատախազությունը Գյուլենին ձերբակալելու միջնորդություն ներկայացրեց դատարան[5]: Սույն որոշումը թուրքական դատական իշխանությունների կողմից հիմնավորվում էր այն փաստարկով, որ պետական հեղաշրջման փորձի հրահանգը տրվել է հենց Գյուլենի կողմից: 2016 թ. օգոստոսին Անկարան ԱՄՆ-ին փոխանցեց փաստաթղթերով լի 85 արկղ, որոնք վերաբերում էին 2016 թ. ռազմական հեղաշրջման փորձին Գյուլենի առնչությանը: Թուրքիան ԱՄՆ-ից պահանջեց Ֆեթհուլլահ Գյուլենի արտահանձնումը: Սակայն ԱՄՆ-ը մինչ օրս չի բավարարել այդ պահանջը:

Հարկ է նշել, որ թուրքական իշխանությունները Գյուլենի և նրա շարժման անունը փորձում են կապել նաև Հրանտ Դինքի սպանության հետ՝ մասնավորապես շրջանառելով այն վարկածը, թե Դինքին «սպանել է տվել զուգահեռ պետությունը»[6]: Թուրքական իշխանությունների կողմից հաճախ է շահարկվում նաև Գյուլենի՝ հայ լինելու մասին ենթադրությունը: Այդ կերպ Էրդողանն ու նրա աջակիցները փորձում են «սևացնել» Գյուլենի անունը: Գյուլենականների հակառակորդների կողմից շրջանառվում են նաև Գյուլենի՝ իբրև թե Հայկական սփյուռքի հետ համագործակցելու և մինչև իսկ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին վարկածները:

Որոշ թուրք գործիչներ նաև հանդես են եկել հայտարարություններով, թե Գյուլենի ձեռքում են գտնվում իսլամացած հայերի մասին գաղտնի տվյալներ: Այսպես՝ 2016 թ. օգոստոսին «CNN Türk»-ի եթերում հարցազրույց տված նախկին գյուլենական Հյուսեին Գյուլերջեն նշել է. «Գյուլենի ձեռքում են գտնվում Թուրքիայի բնակչության բոլոր մատյանները: Նա ինքն է ինձ դրանք ցույց տվել: Նշանավոր անձանց ներկայացնելով՝ ասել է, թե նրանցից ովքեր են հույն, ովքեր՝ հայ» [7]:

Հավելենք, որ գյուլենական շարժումը դպրոցներ ուներ նաև ԱՊՀ տարածքի թուրքալեզու երկրներում, հատկապես՝ Ադրբեջանում[8], որոնք, սակայն, 2014 թ. թուրքական իշխանությունների պահանջով ազգայնացվեցին:

Ուշագրավ է, որ հայկական եկեղեցիների, մասնավորապես Վանի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու նկատմամբ ժամանակին որոշ նկրտումներ է ունեցել նաև գյուլենական շարժման ներշնչանքի աղբյուրներից մեկի՝ «Նուր» շարժման հիմնադիր Սաիդ (Սաիդ-ի) Նուրսին (հայտնի է «Բեդի-ուզ-զաման»՝ «Իր ժամանակի տաղանդ» մականվամբ): Հիշեցնենք, որ «Նուր» կամ «Նուրջու» սունիի իսլամական շարժումը ձևավորվել է 20-րդ դարի սկզբներին՝ հիմնվելով շարժման հիմնադիր Սաիդ Նուրսիի հեղինակած «Ռիսալե-ի Նուր» («Լույսի տրակտատ») ստեղծագործության մեջ ներկայացված գաղափարների և սկզբունքների վրա: Սաիդ Նուրսին Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու վերաբերյալ մի առիթով ասել է. «Եթե Վանա լճի Աղթամար կղզում 10 տարի մնալով՝ 50 հոգու կրթեմ, սաներիս հետ իսլամը կտարածենք համայն աշխարհում և կկարողանանք աշխարհը նվաճել...[9]»:

Փաստորեն, հայկական եկեղեցիների հզոր դաշտի ազդեցությունը գիտակցվել է նաև իսլամական հոգևոր առաջնորդների կողմից, որոնց մի մասը փորձել է այն օգտագործել իսլամի հետևորդների վրա ավելի մեծ ներգործություն ունենալու նպատակով, իսկ մյուս մասը՝ վերջնականապես քանդելու և ավերելու՝ այս տարածքներում քրիստոնյա հայկականության հետքերն իսպառ վերացնելու մոլուցքով: ■

Օգտագործված Աղբյուրներ

1- Տես http://www.bolsohays.com/haber-131792/siirt-eruh-bele diyesi-ermenilere-ait-kiliseyi-cemaate-satti.html (վերջին դիտում՝ 22.01.2020 թ.):
2- http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=513 (վերջին դիտում՝ 22.01.2020 թ.):
3- Տես http://dersimnews.com/2016/08/29/fetonun-orgutlenemedi gi-tek-sehir-dersim (վերջին դիտում՝ 30.08.2016 թ.):
4- Տես Թուրքիայի Հանրապետության պատմություն, Բուհական դասագիրք, Եր., 2018, էջ 290-291:
5- Տես http://www.bbc.com/turkce/haberler-turkiye-36978412 (վերջին դիտում՝ 22.01.2020 թ.):
6- http://www.sabah.com.tr/Gundem/2014/05/14/hranti-gulen-ter or-orgutu-olduttu (վերջին դիտում՝ 22.01.2020 թ.):
7- https://www.yenicaggazetesi.com.tr/gulenin-elindeki-nufus-kutuk leri-39254yy.htm (վերջին դիտում՝ 22.01.2020 թ.):
8- Այդ մասին ավելի մանրամասն տես Հովսեփյան Լ., Գյուլենական շարժումն Ադրբեջանում. ներկա իրավիճակն ու միտումները, «Գլոբուս» վերլուծական հանդես, 2013, թիվ 5:
9- https://odatv.com/akdamar-kilisesindeki-ayine-fethullah-gu len-ne-der-1809101200.html (վերջին դիտում՝ 22.01.2020 թ.):

Քաղաքական զարգացումները և Մերձավոր Արևելքի ու Հարավային Կովկասի պետությունները.

Վ.Հ

Վրաստան

Մերձավոր Արևելքն այսօր դարձել է միջազգային լարվածության կենտրոններից մեկը, եթե չասենք էպիկենտրոնը: Իրավիճակն այստեղ այնքան լարված է, բարդ ու խճճված, որ չափազանց դժվար է ընկալել քաղաքական գործընթացների տրամաբանությունը, դրանց զուգահեռ վարվող դիվանագիտական խաղերի ենթատեքստը:

Տարածաշրջանում որոշակի նպատակներ հետապնդող հիմնական խաղացողներն ավելի ու ավելի շատ երկրների են ներքաշում տեղի ունեցող գործընթացների մեջ՝ քաղաքական, տնտեսական և դիվանագիտական ճնշում գործադրելով վերջիններիս վրա: Վստահորեն կարելի է ասել, որ դրանից չեն խուսափի հարավկովկասյան երկրները: Նրանց ապագա տեղը միջազգային քաղաքական համակարգում կախված է այն բանից, թե վերջիններս ինչպես կկողմնորոշվեն, քաղաքական ինչ վարքագիծ կդրսևորեն այս բարդ իրավիճակում:

Անդրադառնանք նախ Վրաստանին: Անկախության տարիներին վերջինիս ձեռք բերած քաղաքական ուղեբեռը թույլ է տալիս որոշ ենթադրություններ անել միջազգային փոխհարաբերություններում նրա ապագա կողմնորոշումների վերաբերյալ:

Վրաստանը, որպես արտաքին քաղաքական հիմնական ուղղություն, ընտրել է Արևմուտքը՝ ԱՄՆ-ի, ԵՄ երկրների և ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների խորացումն ու զարգացումը դիտելով որպես երաշխիք իր անկախությունը ամրապնդելու և պահպանելու համար: Սա է Վրաստանի արտաքին քաղաքականության գերակայող վեկտորը, որը պայմանավորում է նրա տեղը միջազգային հարաբերություններում, ձևավորում է վրացական դիվանագիտության մաքսիմում ծրագիրը:

Վրաստանն իր արտաքին քաղաքականությունը կառուցեց հակառուսականության պլատֆորմի վրա՝ անտեսելով տարածաշրջանում ուժային գլխավոր բևեռներից մեկի՝ Ռուսաստանի շահերը, լարելով հարաբերությունները այդ երկրի հետ ու զարգացնելով հարաբերությունները հատկապես նման դիրքորոշում ունեցող պետությունների հետ: Ինչպես արտաքին քաղաքականության, այնպես էլ տնտեսական, էներգետիկ, տրանսպորտի և հաղորդակցության, մշակույթի ոլորտներում Վրաստանը ձգտեց ձերբազատվել ռուսական ազդեցությունից և այդ երկրից իր անվտանգությունն ապահովելու համար հետևողականորեն խորացրեց ռազմաքաղաքական համագործակցությունը ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի հետ: Այս քաղաքականությունն ի վերջո հանգեցրեց 2008թ. ռուս-վրացական պատերազմին և

վերջինիս տարածքային կորուստներին:

Այսպիսով, Վրաստանի արտաքին քաղաքական ուղղությունն արևմտյանն է, որում հատուկ տեղ է գրավում ԱՄՆ-ի հետ ռազմավարական գործընկերությունը, իսկ հիմնական նպատակը ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին անդամակցությունն է:

Այս գլխավոր ուղղության ծիրում պետք է դիտարկել նաև Վրաստանի ռազմավարական համագործակցությունը Թուրքիայի և Ադրբեջանի հետ, որոնք տարեց տարի ընդլայնում են իրենց ներկայությունն այս երկրում, հատկապես՝ տնտեսական ոլորտում: Թուրքիան՝ որպես ՆԱՏՕ-ի ծանրակշիռ անդամ, իր վրա է վերցրել համակարգողի դերն Ադրբեջանի ու Վրաստանի հետ փոխհարաբերություններում և օգտագործում է այն որպես գործիք այս տարածաշրջանում իր ազդեցությունը հաստատելու համար: Թուրքիայի հետ ռազմաքաղաքական համագործակցությունը Վրաստանը դիտարկում է որպես Հյուսիսատլանտյան կազմակերպության և եվրոպական երկրների հետ հարաբերությունների ընդլայնման միջոց: Ադրբեջանի հետ ռազմավարական հարաբերությունների միջոցով Վրաստանն ապահովում է էներգետիկ անկախությունը Ռուսաստանից և տնտեսական օգուտներ է քաղում՝ օգտագործելով իր տարածքը որպես էներգակիրների և ապրանքների տեղափոխման տարանցիկ ճանապարհ երկու թուրքական պետությունների միջև: Սակայն չի կարելի չնկատել, որ, տնտեսական փոխադարձ շահերից զատ, թուրքական պետություններն ամրապնդում են նաև իրենց ռազմաքաղաքական դիրքերը Հարավային Կովկասում՝ դարձնելով Վրաստանը ոչ միայն տրանսպորտային, հաղորդակցական միջանցք, այլև իրենց միմյանց կապող ռազմավարական կամուրջ: Դրան նպաստող հանգամանքներից է նաև Վրաստանի հարավում ու հարավ-արևելքում ապրող ադրբեջանցի բնակչության առկայությունը: Աչքի է զարնում, որ այս եռյակում գերակայում են երկու թուրքական պետությունները, որոնց ղեկավարները չեն էլ թաքցնում իրենց աշխարհաքաղաքական հավակնությունները: Թուրքիան, այսպիսով, դիտում է Վրաստան-Ադրբեջան ուղղությունը որպես իր նեոօսմանական քաղաքականության արևելյան վեկտոր: Իհարկե, երկու թուրքական պետությունների հզորացող ազդեցությունը չի կարող չմտահոգել Վրաստանի ներկայիս ղեկավարությանը: Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան ռազմաքաղաքական համագործակցությունը, ըստ էության, աշխարհաքաղաքական հավակնություն է, որն սպառնում է Հայաստանի, Ռուսաստանի ու Իրանի շահերին և խարխլում է հավասարակշռությունը տարածաշրջանում: Եթե այս երկիրը քայլեր չձեռնարկի թուրք-ադրբեջանական ազդեցությունը սահմանափակելու ուղղությամբ, ապա որոշակի իրավիճակներում ստիպված կլինի կատարել նրանց քաղաքական թելադրանքները՝ սրելով հարաբերությունները մյուս հարևանների հետ:

Արտաքին քաղաքականության նման հունավորումը Վրաստանին լուրջ խնդիրների առաջ է կանգնեցնում: Մերձավորարևելյան բարդ ու խճճված իրավիճակում չափազանց դժվար է ըմբռնել ուժերի իրական դասավորությունը, կանխատեսել հիմնական խաղացողների, մանավանդ՝ Թուրքիայի վարքագիծը: Երբ հայտնի չէ, թե սիրիական բեմում համագործակցող ՌԴ-ի, Իրանի ու Թուրքիայի փոխհարաբերություններն ինչով կավարտվեն, ինչ քայլերի կդիմեն ԱՄՆ-ն ու նրա դաշնակիցները մերձավորարևելյան տարածաշրջանում, և ուր կհասնեն ամերիկա-թուրքական և ամերիկա-իրանական սրվող հարաբերությունները, Վրաստանը պետք է ջանքեր գործադրի իր քաղաքական ու դիվանագիտական դաշտն ընդլայնելու համար՝ հաշվի առնելով բոլոր հարևանների և ուժային կենտրոնների շահերը: Թերևս սրանով կարելի է բացատրել վերջերս վրաց-հայկական հարաբերությունների ակտիվացումը, Իրանի հետ քաղաքական ու տնտեսական հարաբերությունների զարգացմանն ուղղված քայլերը և նույնիսկ ՌԴ-ի հետ դիվանագիտական շփումների հաճախակիացումը:

Սա է Վրաստանի այսօրվա իշխանությունների արտաքին քաղաքական խնդիրներից մեկը, որի լուծումը թույլ կտա ինքնուրույն կողմնորոշվել թե՛ հարավկովկասյան, թե՛ մերձավորարևելյան քաղաքական դաշտում:

Ախալցիխայի կամ Ռաբաթի բերդը: Կառուցվել է 16-րդ դարում, Ախալցիխան օսմանյան զորքերի կողմից գրավվելուց հետո և, որպես մուսուլմանական համալիր, հիմնովին վերականգնվել է Նախագահ Սահակաշվիլիի օրոք:

Ադրբեջան

Ադրբեջանը առանձնանում է էներգետիկ հարուստ պաշարներով, բնակչության մեծ թվով, տրանսպորտային ու հաղորդակցական լայն հնարավորություններով և աշխարհաքաղաքական կշռով:

Անկախության առաջին տարիների խառնաշփոթից, արցախյան պատերազմում պարտություններից հետո իշխանության վերադարձած Հեյդար Ալիևը կարողացավ կայունացնել ներքաղաքական դաշտը, ձևավորել պետության գործառնության մեխանիզմները, կարգավորել տնտեսական հարաբերությունները և նավթային եկամուտների բաշխումը: Կնքելով զինադադար ԼՂ ճակատում և ստորագրելով նավթային պայմանագիր արևմտյան երկրների հետ (ՄԹ, ԱՄՆ)՝ նա պայմաններ ստեղծեց երկրի տնտեսության զարգացման համար, ուրվագծեց երկրի արտաքին քաղաքականության ուղղություններն ու նպատակները:

Ժառանգելով իշխանությունը՝ Իլհամ Ալիևը, հետևողականորեն, ամրապնդեց պետական համակարգը, իր ձեռքում կենտրոնացրեց կառավարման և ֆինանսատնտեսական լծակները, ձեռնասուն դարձրեց ընդդիմությանը:

Երկրի տնտեսական, ֆինանսական և վարչական ներուժը նա հիմնականում ուղղում է բանակ կառուցելու ու այն ժամանակակից տեխնիկայով զինելու, բազմավեկտոր արտաքին քաղաքականություն վարելու և դրան համապատասխան դիվանագիտական գործունեություն ծավալելու, ադրբեջանցիների ազգային ինքնագիտակցություն ձևավորելու նպատակին:

Ադրբեջանի զինված ուժերի բարեկարգման գործում կարևոր դեր խաղաց ռազմական արդյունաբերության նախարարության գործունեությունը:

Ռազմարդյունաբերության ոլորտում ԱՀ-ն համագործակցություն է ծավալել գլխավորապես Թուրքիայի, ՌԴ-ի, Իսրայելի, Հարավաֆրիկյան Հանրապետության և Պակիստանի հետ: Իհարկե, Ադրբեջանի ռազմաարդյունաբերության զարգացման հարցում ամենամեծ ավանդը Թուրքիայինն է: Վերջինս հիմնավորապես մասնակցում է Ադրբեջանի բանակաշինությանը, սպայական կազմի ուսուցմանը, զինավարժությունների կազմակերպմանն ու անցկացմանը, ապահովում է հետախուզական տեղեկատվությունը և այլն:

Թուրքիայի և Ադրբեջանի զինված ուժերի մասնակցությամբ զորավարժությունները դարձել են հաճախակի: Միայն անցած տարվա առաջին կեսին անցկացվել են երեք միջազգային և մեկ համատեղ զորավարժություններ: Երեք միջազգային զորավարժություններին մասնակցել են նաև Բանգլադեշի, Վրաստանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Կոսովոյի, ՄԹ, ԳԴՀ, Իտալիայի, Բուլղարիայի, Ռումինիայի Իսրայելի, այսպես կոչված, Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության, մի շարք արաբական երկրների և Պակիստանի (մասնակցել է բոլոր զինավարժանքներին) զինծառայողներ:

Անցած 10-15 տարիների ընթացքում պարտված, վատ պատրաստված սպայական կազմով, վատ զինված բանակն այսօր արդեն ապահովված է 2 միլիարդի հասնող բյուջեով և ժամանակակից տեխնիկայով: Նկատի ունենալով 2016 թ. ապրիլի 1-ի նրանց հարձակման ձախողումը, դժվար է ասել, թե նույն չափով բարձրացել է ազերի զինվորների մարտունակությունը: Մարտական ոգին չես գնի, ուստի պետք է գնել վարձկանների, դրոններ ու հրթիռներ՝ հեռվից հակառակորդին հարված հասցնելու համար, իսկ լավ զինված ազերի զինվորը կանի այն, ինչ սովոր է անել՝ կկռվի խաղաղ բնակչության դեմ:

Թուրքիան ոչ միայն օժանդակում է ադրբեջանական բանակաշինությանը, միջազգային հարաբերություններում պետության կայացմանը, այլև ապահովում է նրան անհրաժեշտ քաղաքական, ռազմական և գաղտնի տեղեկատվությամբ՝ աշխարհում և տարածաշրջանում զարգացումների ու տիրող իրավիճակի վերաբերյալ:

Գալով իշխանության՝ Ալիևը ձեռնամուխ եղավ նաև արտաքին քաղաքական հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների լուծմանը, դիվանագիտական կադրերի պատրաստմանը: Ի տարբերություն ռուսամետ Մութալիբովի կամ արևմտամետ Էլչիբեյի՝ նա սկիզբ դրեց հավասարակշռված հարաբերություններին՝ բոլոր ուղղություններով: 1994 թ. արևմտյան, ինչպես նաև ռուսական ու սաուդյան խոշոր նավթային ընկերությունների հետ կնքած պայմանագիրը սկիզբ դրեց ԱՀ բազմավեկտոր արտաքին քաղաքականությանը: Էներգետիկ, տրանսպորտային ծրագրի իրականացման մեջ Ալիևները ներգրավեցին տարբեր պետությունների և միջազգային ընկերությունների՝ դրանով իսկ ամրապնդելով ԱՀ միջազգային դիրքերը:

Ի. Ալիևը վերջին 15 տարիների ընթացքում կարողացավ հավասարակշռել իր երկրի միջազգային հարաբերությունները, զարգացրեց դրանք թե երկկողմ, թե բազմակողմ կապերով, գործնական հարաբերություններ հաստատեց ինչպես գերտերությունների ու տարածաշրջանային պետությունների, այնպես էլ միջազգային կառույցների հետ: Կարելի է ասել, որ չնայած գլոբալ և տարածաշրջանային ազդեցություններին, Ադրբեջանը կարողանում է վարել համեմատաբար ինքնուրույն քաղաքականություն:

Նշենք նաև, որ նավթից ու գազից ստացվող հսկայական եկամուտների զգալի մասը ադրբեջանական իշխանություններն ուղղում են պետության միջազգային հեղինակության բարձրացմանը, օրինակ՝ զգալի տնտեսական ներդրումներ են կատարում այլ երկրներում, ընդարձակում են լոբբիստական գործունեությունը, անցկացնում են միջազգային տարատեսակ միջոցառումներ և այլն:

Բնութագրելով ԱՀ արտաքին քաղաքականությունը՝ չի կարելի անտեսել հետևյալ երկու հանգամանքները:

Առաջին. ալիևյան արտաքին քաղաքականությունը մոլագարության հասնելու աստիճան նպատակադրված է բոլոր ուղղություններով ու միջոցներով չեզոքացնելու Հայաստանը, սահմանափակելու նրա գործունեությունը միջազգային հարաբերություններում, խոչընդոտելու և ձախողելու ՀՀ մասնակցությունը ցանկացած միջազգային նախագծի և ծրագրի՝ երկկողմ

հարաբերություններում մեծ տեղ հատկացնելով հակահայկական լոբբինգին ու քարոզչությանը: Միաժամանակ Ի. Ալիևը, օգտագործելով նավթային դոլարները, փորձում է ադրբեջանը ներկայացնել որպես հարուստ պատմություն ու մշակույթ ունեցող, ժողովուրդ, ոչնչացնում կամ յուրացնում է հարևան ժողովուրդների մշակութային արժեքները, վարձում և կաշառում է կեղծարարություններից չխորշող օտարազգի քաղաքական ու հասարակական գործիչների, քաղաքագետների, լրագրողների, մշակույթի գործիչների, պատմաբանների՝ իրականությունը խեղաթյուրելու և պատմությունը կեղծելու, ինչպես նաև հայերին վարկաբեկելու և Ադրբեջանում տիրող հայատյացությունն արդարացնելու նպատակով:

Երկրորդ. Ադրբեջանի բազմավեկտոր հարաբերություններում առանձնահատուկ են Թուրքիայի հետ փոխհարաբերությունները: ԱՀ արտաքին քաղաքականության առանցքն ադրբեջանա-թուրքական դաշինքն է, որն իր ձևակերպումն է ստացել «մեկ ժողովուրդ, երկու պետություն» կարգախոսում:

Ադրբեջանն իր արտաքին քաղաքականությունը հիմնականում համաձայնեցնում է Թուրքիայի հետ:

Ռ. Էրդողանը և Ի. Ալիևը չեն թաքցնում, որ հավակնում են մասնակից դառնալու գլոբալ քաղաքականությանը՝ երազելով իրականացնել պանթուրքիզմի արգասիք նեոօսմանական ծրագրեր: 2019 թվականին ելույթ ունենալով Թուրքալեզու պետությունների համագործակցության խորհրդի նիստում, Ալիևն ասում է. «Նախիջևանը բաժանված է Ադրբեջանից: Նրանց միջև գտնվում է Զանգեզուրը՝ հին ադրբեջանական հող: Դրա փոխանցումը Հայաստանին աշխարհագրական ճեղք բացեց թուրքական աշխարհում: Ենթադրում եմ, որ եկել է ժամանակը՝ ձևավորելու համաթուրքական ապագայի նոր հորիզոնները»: Այս նպատակի իրականացման համար նա 20 տարի է նախատեսում: Երկու թուրք առաջնորդներ հույս ունեն վերացնելու այդ ճեղքը՝ օգտվելով Մերձավոր Արևելքում ստեղծված իրավիճակից, որտեղ մեծ ու փոքր տերությունների քաղաքական վեկտորները շարունակական վերադասավորման գործընթացում են:

Իհարկե, Ալիևը գիտակցում է Թուրքիայի մերձավորարևելյան խաղերից, միջազգային հարաբերություններում Էրդողանի շեշտակի շրջադարձերից բխող հնարավոր վտանգները և կենսունակ վիճակում է պահում արտաքին քաղաքական բոլոր, նույնիսկ իրար հակադիր վեկտորները (հարկ եղած դեպքում նահանջի տարբեր ճանապարհներ ապահովելու համար): Նա է Ադրբեջանում գլխավոր թուրքամետը և ռուսամետը, արևմտամետը և իսլամամետը: Ոչ մի հնարավորություն չընձեռելով ընդդիմությանը՝ նա ի վիճակի է արմատապես փոխելու քաղաքական ուղղությունը և մնալու երկրի ղեկավար: Մերձավոր Արևելքում հետևելով թուրքական քաղաքական գծին նա միաժամանակ հավասարակշռված մակարդակի վրա է պահում հարաբերությունները ՌԴ-ի և Իրանի հետ: Ռազմավարական հարաբերություններ զարգացնելով վերջինիս հետ՝ սերտորեն համագործակցում է ԱՄՆ-ի, Իսրայելի և Սաուդյան Արաբիայի հետ:

Վերադառնալով Ի. Ալիևի հիվանդագին հակահայկականությանը՝ նշենք, որ նա նպատակ ունի միջազգային և տարածաշրջանային բարենպաստ զարգացման՝ դեպքում քաղաքական կամ, եթե իրադրությունը թույլ տա, ռազմական հարված հասցնել Հայաստանին: Դատելով երկու երկրների քաղաքական հայտարարություններից, ռազմական նախապատրաստություններից և մասնավորապես ադրբեջանական զորքերի տեղաշարժերից ու նորանոր սպառազինությունների ձեռքբերման փաստից՝ կարելի է ասել, որ նրանք լավատեղյակ են տարածաշրջանում դեպքերի զարգացման տրամաբանությանը, նախապատրաստվում և հետևում են դրանց ընթացքին: Կարելի է ենթադրել, որ նրանց ուշադրության առանցքում է, մասնավորապես, Իրանի շուրջ իրադրության սրման հավանականությունը: Նման ենթադրության համար հիմք են տալիս ԱՄՆ նախագահ Դ. Թրամփի կողմից հնչեցված սպառնալիքները Իրանի հասցեին, ինչպես նաև նրա շնորհավորական ուղերձը Ի. Ալիևին՝ Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետության 100-ամյակի կապակցությամբ, որում մասնավորապես նշվում է, որ երկու երկրները, բարդ տարածաշրջանային մարտահրավերների լուծման հարցում սերտորեն գործակցում են, և մոտակա ամիսներին հնարավորություններ կընձեռվեն ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում, ինչը լավագույն պայմաններ կստեղծի ամերիկա-ադրբեջանական համագործակցության համար: ■

Աննախադէպ պատերազմ ապրած սուրիահայութիւնը՝ կորուստներ, մարտահրաւէրներ, վերականգնումի աշխատանք

Զարմիկ Պօղիկեան

Մարտ 2011-ին ծայր առած սուրիական պատերազմը, աստիճանաբար տարածուելով, իր բովին մէջ առաւ Սուրիոյ ամբողջ ժողովուրդը, ներառեալ սուրիահայութիւնը:

Խաղաղ պայմաններու մէջ ապրող, առողջ ու կայուն գաղութ մը մէկ օրէն միւսը դէմ յանդիման գտնուեցաւ գոյութենական վտանգին դիմաց:

Սուրիահայ գաղութը, կազմուած ըլլալով պատմական իր հողերէն բռնի տեղահանուած, Հայոց Ցեղասպանութենէն ճողոպրած մեր ժողովուրդին զաւակներէն ու անոնց շառաւիղներէն, իր մշակութային, ազգային ժառանգութիւնը պահպանած, անոր շնորհիւ իսկ ծաղկած, հայեցի դաստիարակութեամբ նորահաս հայ սերունդներ հասցուցած ու տարիներու ընթացքին ամբողջ Սփիւռքին մարդուժ հայթայթած գաղութ էր, ունէր պատմական դերակատարութիւն: Գաղութ մը, որ, արմատներ նետելով նաև Սուրիոյ մէջ, ներդրում բերած էր անոր այլազան ոլորտներու զարգացման, դարձած Սուրիոյ ժողովուրդին կարևոր բաղադրիչներէն մէկը, միաժամանակ ամրօրէն պահպանելով իր կապը համայն հայութեան ու հայրենիքին հետ:

Սուրիահայութեան պատմական այս դերակատարութիւնը լուսարձակի տակ առնուեցաւ, ու անոր տագնապին լուծումներ որոնելու մղձաւանջը անցաւ համայնքին ու երկրին սահմանները՝ դառնալով համահայկական խնդիր:

Պատերազմի ամէնէն դժնդակ օրերուն, բնականաբար հնչեցին այլազան կարծիքներ՝ գաղութը պարպելու, զայն ամբողջութեամբ Հայաստան տեղափոխելու մասին: Ոմանք սկսան գաղութին դամբանականն իսկ կարդալ, երբեմն առանց նկատի առնելու պատերազմի բովին մէջ ապրողին դժուարութիւններն ու հոգեվիճակը: Այս բոլորը տագնապող մեր ժողովուրդի զաւակներուն փրկութեան միջոցներու որոնումի արտայայտութիւններ էին, որոնք բնականաբար պիտի հնչէին տարբեր ըմբռնումներէ, համոզումներէ յառաջացած դրսևորումներու իբրև արդիւնք:

Ոմանք Սուրիոյ մէջ ապրող հայութիւնը կը դիտէին իբրև անջատ հաւաքականութիւն, որուն հարցերով կը տագնապէին առաւելաբար: Սուրիահայութիւնը քաջ գիտէր, որ ինք մաս կը կազմէր հայ ժողովուրդին, կը գիտակցէր, որ պատերազմի օրերուն իր կեցուածքը պիտի անդրադառնար ամբողջ հայութեան, նոյնիսկ Հայաստանի ու Արցախի վրայ, իսկ հալէպահայութեան կենաց մահու կռիւը հայութեան գոյութենական ընդհանուր ռազմավարութենէն դուրս անջատ պայքար մը չէր, հետևաբար համահայկական ուշադրութեան արժանի պիտի ըլլար: Սուրիահայութիւնը, սակայն, ինքզինք կը տեսնէր նաև իբրև սուրիական ընկերութեան մէկ մասնիկը ու իր մօտեցումներուն, իր արտայայտութիւններուն մէջ նկատի կ'ունենար այս հանգամանքը անպայման:

Պատերազմի կրակը հասած էր արդէն հայկական շրջաններ: Սուրիահայութիւնը, նկատի ունենալով պատերազմին տարողութիւնն ու տագնապը հրահրող քաղաքական տարբեր կողմերու, յատկապէս՝ Թուրքիոյ ազդեցութիւնը, հանդէս եկաւ երկրին ու պետութեան շահերէն, յայտարարելով, որ.

- Ձատագովն է երկրէն ներս այնպիսի բարեփոխումներու իրականացման, որոնցմով պաշտպանուած պիտի ըլլան սուրիական ընկերութեան բոլոր բաղադրիչներուն իրաւունքներն ու շահերը:

- Կը հաւատայ, որ տագնապի լուծումին կարելի է հասնիլ սուրիական բոլոր կողմերուն երկխօսութեամբ, առանց դիմելու բռնի միջոցներու կամ արտաքին միջամտութիւններու:

- Ձատագովն է պետութեան գերիշխանութեան, երկրին տարածքային ամբողջականութեան ու ժողովուրդին միասնութեան պահպանման:

Պատերազմը դիմակայելու համար, սուրիահայութիւնը լծուեցաւ միասնական աշխատանքի: ՀՅԴ Բիւրոյին նախաձեռնութեամբ յառաջացաւ Սուրիահայութեան Շտապ Օգնութեան և Վերականգնումի Մարմինը, որուն մաս կազմեցին սուրիահայ բոլոր կազմակերպութիւնները, բարեսիրական միութիւններն ու յարանուանութիւնները:

Յիշեալ մարմինին աշխատանքները ունեցան չորս հիմնական ուղղութիւններ՝ առողջապահական, կրթական, շինարարական և սննդաբաշխման:

Սուրիահայութիւնը ունեցաւ զոհեր, վիրաւորներ, առևանգուողներ, տեղահան դարձած ընտանիքներ, նահատակ զինուորական ծառայողներ: Քանդուեցան հայկական եկեղեցիներ, դպրոցներ, բժշկական կեդրոններ, անկեղանոցներ, պատսպարաններ, հազարաւոր բնակարաններ և գործատեղիներ:

Տնտեսական սուր տագնապն ու անգործութիւնը եկան աւելնալու անապահովութեան վրայ, ու սուրիահայութիւնը խոշտանգումի և խորտակումի աննախընթաց պայմաններու մէջ յայտնուեցաւ:

Յատկապէս հայահոծ Նոր Գիւղի վրայ յարձակումը, Քեսապի գրաւումը տեղահանութեան ողբերգական իրավիճակներ ստեղծեցին:

Համայն հայութիւնը փութաց սուրիահայութեան օգնութեան: «Օգնի՛ր եղբօրդ», ՍԱՐՖ, Սփիւռքի զանազան համայնքներու մէջ հանգանակութիւններ: Տակաւի՛ն, քաղաքական գետնի վրայ Հայաստանի, Հայ Դատի գրասենեակներու, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան սուրիահայութեան ի նպաստ քաղաքական հանդիպումներ, կոչեր, սուրիահայութեան տագնապը պարզող յայտարարութիւններ նպաստեցին, որ սուրիահայութիւնը նուազագոյն վնասներով դուրս գայ այս տագնապէն: Սուրիոյ մէջ ՀՀ դեսպանութիւնն ու հիւպատոսութիւնը եղան դիւանագիտական միակ ներկայացուցչութիւնները, որոնք բաց պահեցին իրենց դռները Սուրիոյ պատերազմի տարիներուն և ծառայեցին տեղւոյն հայ համայնքին:

Համայնքը թիւի և որակի անկում կրեց: Այնուամենայնիւ,

Ավերված Սրբոց նահապետաց եկեղեցին Դեր զորում

ամէն գնով կանգուն պահեց իր ազգային, մշակութային կեանքը, բաց պահեց իր ամրոցները՝ հայկական վարժարանները: Ազգային իշխանութիւնը քանիցս յայտարարեց, որ նիւթական դժուարութիւններու պատճառով ոչ մէկ հայ աշակերտ դուրս պիտի մնայ հայկական դպրոցներէն:

Իրականութեան մէջ, սուրիահայ գաղութին դիմադրութեան հիմնական երաշխիքն ալ դպրոցներուն և ազգային կեանքին աշխոյժ մնալն էր: Ռումբերու տարափին տակ, երբ ուսուցիչը կը շարունակէր իր առաքելութիւնը հայկական վարժարանին մէջ, յանձնառու հայ տղաքը՝ գիշեր-ցերեկ հայկական կեդրոններուն դիմաց, մշակութային գործիչը՝ բեմին վրայ, հայ հոգևոր պետերը՝ եկեղեցիներու խորանին վրայ ու ժողովուրդին կողքին, մարդիկ կ'ըմբոնէին ու կը հաւատային, որ գաղութը անտէր չէ, ու կեանքը կը շարունակուի:

Սուրիական տագնապի ամբողջ տևողութեան, պայքարի առաջին գիծին վրայ մնացին հայկական թաղերու պաշտպանութեան նուիրուած սուրիահայ տղաքը: Անոնք, իրենց կեանքը վտանգելով, ոչ միայն գիշեր-ցերեկ հսկեցին հայկական թաղամասերու և կառոյցներու ապահովութեան, այլև ռումբերու տակ վիրաւորներ փոխադրեցին հիւանդանոց, փլատակներու տակէ զոհեր դուրս բերին, հրդեհներ մարեցին, նոյնիսկ Հալէպի պաշարման օրերուն սննդամթերք բաշխեցին հայ ընտանիքներուն, ջրամատակարարում կատարեցին, երբ Հալէպը զրկուած էր նոյնիսկ խմելու ջուրէն:

Տագնապի ամէնէն բռնկուն օրերուն, «մնա՛, թէ՛ մեկնիլ» հարցումը կը տանջէր իւրաքանչիւր սուրիահայու միտքն ու հոգին:

Համայնքի պատասխանատուներուն ուղղութիւնը յստակ էր՝ պահել դարարմատ այս գաղութը հնարաւոր բոլոր միջոցներով, իսկ պատերազմի ծանր պայմաններուն մէջ արտակարգ դժուարութիւններու դէմ յայտնուողներն ու մեկնիլ փափաքողները քաջալերել, որ ուղղուին Հայաստան ու Արցախ:

Սուրիահայութեան վաթսուն առ հարիւրը գաղթի ցուպը ձեռքը առաւ կրկին, իւրաքանչիւրը իր դժուարութիւններուն, իր պայմաններուն համապատասխան քայլ առաւ: Ոմանք երկրին մէջ առժամաբար քաղաքէ քաղաք տեղափոխուեցան, ուրիշներ մեկնեցան մերձակայ երկիրներ, յատկապէս՝ Լիբանան: Շուրջ 30-35.000 սուրիահայեր տեղափոխուեցան Հայաստան, տասնեակ ընտանիքներ՝ նաև Արցախ, ոմանք, սակայն, չկրցան վերջնական կայք հաստատել հայրենիքին մէջ ու, տնտեսական դժուարութիւններ ունենալով, մեկնեցան արևմտեան երկիրներ:

Հայաստան ու Արցախ հաստատուող սուրիահայերուն ըստ կարելւոյն օժանդակութիւններ տրամադրուեցան, հայկական անցագրերը օգնեցին, որ անոնք կարելիութիւն ունենան դիւրաւ հաստատուելու Հայաստանի մէջ, ոմանք ալ, ցաւօք, օգտագործեցին այդ անցագրերը այլ երկիրներ մեկնելու համար: Այս թոհուբոհին մէջ, սակայն, նկատելի եղաւ նման երկիրներէ գաղթը դէպի Հայաստան ուղղելու համահայկական տարողութեամբ ծրագրաւորումի խոցելիութիւնը: Ո՛չ Հայաստանի պետութիւնը

հայրենադարձութեան ծրագրեալ աշխատանք մը ունէր, ոչ ալ սփիւռքահայ մեր կառոյցները այդ ուղղութեամբ յստակ քաղաքականութիւն մը մշակած են ցարդ, գործակցաբար հայրենի պետութեան հետ:

Մինչև օրս Հայաստան ու Արցախ ապրող սուրիահայերը արդէն կարգաւորած են իրենց կեանքը հայրենիքի մէջ:

Արևմտեան շրջաններ գաղթած սուրիահայերը գէթ համարկուած են տեղւոյն հայ գաղութներու կեանքին մէջ: Հոն հայկական դպրոցներ, ակումբներ, միութիւններ զիրենք ներգրաւելու աշխատանք տարին ու կը տանին՝ զերծ պահելու զիրենք ուծացումէ:

Պատերազմը տակաւին իր աւարտին չէ հասած, սակայն երկրի ապահովական վիճակը նկատառելի բարելաւում արձանագրած է:

Սուրիահայութիւնը նուազագոյն վնասներով դուրս եկաւ այս պատերազմէն և իր քաղաքական յստակ դիրքորոշումին ու հաւասարակշռուած մօտեցումներուն շնորհիւ արժանացաւ Սուրիոյ ժողովուրդին ու պետութեան վստահութեան: Պէտք է հաստատել նաև, որ տագնապի ամբողջ տևողութեան, թրքական գործօնին ազդեցութիւնը զգալի էր, հայկական թաղամասերու, յատկապէս դպրոցներու և եկեղեցիներու ռմբակոծումները, Տէր Զօրի Սրբոց Նահատակաց յուշահամալիրին պայթեցումը, Քեսապի գրաւումն ու կողոպուտը, Նոր Գիւղի բռնն ռմբակոծումը թրքական յստակ ձեռագիրին մասին կը խօսէին: Տակաւին, Սուրիոյ հիւսիսարևելեան շրջաններուն սպառնացող թրքական ներխուժումին հետևանքները շրջանի հայ և այլ փոքրամասնութիւններու գոյութիւնը վտանգի տակ կը պահեն: Այնուամենայնիւ, սուրիահայութիւնը, պատմական այս գաղութի կենաց մահու կռիւէն նօսրացած, տնտեսապէս քայքայուած, բայց և այնպէս, դիմացկուն դուրս եկաւ:

Ներկայիս, գաղթին և շարունակուող տեղափոխութիւններուն իբրև հետևանք, փոխուած է Սուրիոյ տարբեր քաղաքներու, յատկապէս՝ հայկական թաղամասերու ժողովրդագրական պատկերը: Երբեմնի հայահոծ ու հայադրոշմ շրջանները այսօր նոյն պատկերը չեն կրեր, ինչ որ իր անդրադարձը կրնայ ունենալ սուրիահայութեան ընկերային կեանքին վրայ յատկապէս: Սուրիոյ հիւսիսարևելեան շրջանի կարգ մը քաղաքներ հայաթափուած են արդէն, ինչպէս՝ Տէր Զօր, Ռաս ուլ Այն, Թէլ Ապիատ, յատկապէս թրքական և թրքամէտ զինեալ ուժերու ներխուժման իբրև հետևանք:

Պատերազմի տևողութիւնը կանխատեսելի չէ, որովհետև արտաքին ուժերու միջամտութիւնը կ'երկարաձգէ տագնապի քաղաքական լուծման փուլերը:

Սուրիահայութիւնը, այնուամենայնիւ, այս տարիներուն լծուած է վերակազմակերպումի և նիւթական ու հոգեմտաւոր վերականգնումի աշխատանքին:

Արդէն վերաշինուած և կրկին բանիլ սկսած են տասնեակ կառոյցներ, երիտասարդական կեդրոններ, դպրոցներ, հանրային հաւաքավայրեր, եկեղեցիներ: Շատեր վերաբացած ու կեանքի կոչած են իրենց աւերուած գործատեղիները:

Այստեղ կարևոր է հաստատել նաև, որ երկրի ղեկավարութիւնը զօրավիգ կը կանգնի հայութեան ամէն մակարդակներու վրայ՝ վերակառուցելու հայկական կառոյցները, նեցուկ կանգնելու հայ երիտասարդութեան՝ տնտեսական փոքր ծրագիրներու նիւթական ներդրումներ յատկացնելով անոնց, պահպանելու հայկական ինքնութիւնը՝ միշտ առաջ մղելով քաղաքակրթութիւններու և մշակոյթներու խաղաղ գոյակցութեան երկիր ըլլալու Սուրիոյ հանգամանքը:

Սա խրախուսական ազդակ է՝ պահպանելու սուրիահայ գաղութը, անոր մշակութային ժառանգութիւնը, լեզուն և պատմական դերակատարութիւնը:

Սուրիահայեր ներգրաւուած են պետական մարմիններու, երկրի ուսումնական, տնտեսական, առողջապահական, արդիւնաբերական կեանքի տարբեր ոլորտներուն մէջ:

Երկրի տնտեսական պաշարման ներկայ փուլին, համայնքը կը դիմագրաւէ տնտեսական սուր տագնապ, որուն հետևանքով ալ գաղթի դիմող երիտասարդներուն թիւը ցարդ անհակակշռելի կը մնայ:

Սա կը պահանջէ ծրագրեալ աշխատանք՝ պատնէշի վրայ պահելու համար յատկապէս երիտասարդ տարրը, բարելաւելու անոնց տնտեսական վիճակը՝ աշխատանքի առիթներ բանալով անոնց դիմաց ու քաջալերելով, որ անոնք ներգրաւուին ազգային կեանքին մէջ և նպաստեն համայնքի վերակազմակերպման՝ նոր ոճով, նորոգուած մտածելակերպով:

Սփիւռքի այս փոքրիկ, բայց բերրի ածուն, իր իւրայատկութեամբ, իր ազգային դիմագիծով ու պատմական ժառանգութեամբ, մեր բոլորին գուրգուրանքին առարկան պէտք է մնայ:

Սուրիոյ հիւսիսային շրջաններու հայութիւնը, այս օրերուն, զգուշութեամբ կը հետևի քաղաքական և յատկապէս զինուորական զարգացումներուն: Անհրաժեշտ է լարուած պահել Թուրքիոյ՝ սուրիական հողեր ներխուժելու և սուրիական հողեր գրաւելու նկրտումներուն համահայկական դատապարտումը ևս, որովհետև թրքական գործօնին ազդեցութիւնը այլապէս կրնայ ընդլայնիլ ու հասնիլ ոչ միայն միջինարևելեան տարբեր երկիրներ, այլև Հարաւային Կովկաս:

Այստեղ կարելի է շեշտել նաև Միջին Արևելքի հայ համայնքներուն քաղաքական ազդեցութեան կարևորութիւնը: ■

Հալեպում փոնում են ՀՅ Դաշնակցության օրը

Լուսարձակային կէտեր՝ միջինարևելեան տարածաշրջանին վրայ

Շահան Գանտահարեան

Հակակառավարական ցույց Լիբանանում

Միջինարևելեան զինուորաքաղաքական իրադարձութիւնները կը նախանշեն, որ տակաւին որոշ ժամանակահատուածի վրայ ցնցումային փուլեր պիտի շարունակուին արձանագրուիլ:

Լիպիայէն մինչև Սուրիա, Լիբանան, Արաբական ծոց և Իրաք, Իրան թէժացման միտող յայտարարութիւններ, սպառնալիքներ (և ոչ միայն) եռացող կաթսայի վերածած են ամբողջ տարածաշրջանը:

Առանցքային նշանակութիւն ունի շիի-սիւննի ներիսլամական տարադաւանանք երևոյթը, որ վառելանիւթի դեր կը կատարէ տարբեր գերտէրութիւններու բախման կէտերու ձևաւորման և մանաւանդ ազդեցութեան գօտիներու նուաճման քաղաքականութեանց առումով:

Ներիսլամական հակասութիւնը պահ մը կը թուէր, որ մեղմացման պահեր պիտի գրանցէր, յատկապէս, երբ Ռիատ-Թեհրան անուղղակի երկխօսութեան երևոյթներ պարզուեցան:

Ռիատի մէջ, իշխանական վերափոխումները մենատիրութեան ժողովրդավարացման խաբուսիկ պատկերներ հրամցուցին, այդուհանդերձ չկրցան նոյնիսկ այդ խաբկանքը փոխանցել Ռիատի կիրարկած արտաքին քաղաքականութեան: Սիւննի աշխարհին վրայ Ռիատի ազդեցիկութիւնը հետզհետէ կրօնական խորհրդանշային բնոյթի կը վերածուի: Սիւննի աշխարհը կառավարելու մրցակցութիւնը հիմնականին մէջ Եգիպտոսի և Թուրքիոյ պետութիւններուն միջև կը յայտնուի, երբ նկատի ունենանք Սէուտական Արաբիոյ արագակշռոյթ նահանջի նշանները այս առումով:

Եւ եթէ Եգիպտոսը տակաւին ներքին անկայունութեան վերադարձի վտանգը կը դիմագրաւէ, ապա Թուրքիան ներքին բռնատիրութեամբ և արտաքին շատ համարձակ ու յաւակնոտ քայլերով կը փորձէ տարածաշրջանին մէջ գլխաւոր խաղացողի հանգամանքը պահել:

Ի տարբերութիւն Սէուտական Արաբիոյ, Անգարան ներիսլամական տարադաւանանքայնութեան առաջնահերթութիւն չի տար՝ փորձելով միաժամանակ պահպանել Մոսկուա-Թեհրան-Անգարա ռազմավարական առանցքը, որ յատկապէս ձևաւորուեցաւ սուրիական պատերազմին մէջ երեք պետութիւններու հասարակաց մօտեցումներն ու շահերը նկատի ունենալով:

Տարածաշրջանին մէջ Թուրքիոյ՝ տիրական ըլլալու երևոյթը աւելի տպաւորութիւն է, քան իրողութիւն: Իր երկու դաշնակիցները զսպիչ օղակի դեր կը կատարեն միաժամանակ:

Թուրքիան սանձարձակօրէն չէ յաջողած ձևաւորել անվտանգութեան այն գօտին, որ սուրիական պատերազմի առաջին օրէն իբրև գերագոյն առաջադրանք յայտարարած էր և որուն իրականացման համար իր կշիռը ներդրած: Կիսագօտիի ձևաւորումը այդ մասին կը վկայէ: Ամերիկեան ուժերու Սուրիայէն մասնակի հեռացումը կը կապուի այդ գօտիին միայն կիսով չափ ձևաւորման փաստին: Յայտնաբար, քրտական գործօնը դեռ շահարկելի գործիք է, հիմնականին մէջ՝ Թուրքիոյ դէմ:

Իրաքը ներկայ պահու դրութեամբ Իրանի և Միացեալ Նահանգներու միջև շարունակուող «փրոքսի» պատերազմի հիմնական տարածքն է: Սիւլէյմանիի սպանութիւնը կտրուկ չէ փոխած ռազմախաղի կանոնները: Գրոհ գրոհի դիմաց արդէն տեղի կ'ունենայ անուղղակի, երբեմն՝ ուղղակի դրուածքով: Նոյնը որոշ ուժգնութեան թափով շարունակուելու նախադրեալները չէ սպառած տակաւին և գրեթէ կը բացառուի ուղղակի հարուած-հակահարուածի բեմագրութիւնը:

Քաթարի բազմակողմ դիւանագիտութիւնը

աշխատելու տուեալներ կը պարունակէ: Ռիատը փաստօրէն չյաջողեցաւ ամբողջական շրջափակման ենթարկել Տոհան, որ նախաձեռնած էր բնականոն յարաբերութիւններու Թեհրանի հետ: Քաթարի բազմակողմ դիւանագիտութիւնը կը ներառէ նաև Անգարան, որուն հետ ոչ սերտօրէն փոխկապակցուած զինուորական, տնտեսական և քաղաքական միացեալ շահերը ակներև են:

Քաթարի հետ յարաբերութիւնները սերտացնելով, Մոսկուայի և Թեհրանի հետ ռազմավարական առանցքներ կազմելով, Անգարան ապահով կը զգայ նոր արկածախնդրութեան դիմելու՝ դէպի Լիպիա զինուորական ներկայութիւն դառնալու որոշումով: Տարածաշրջանին մէջ յայտնուող իւրաքանչիւր թէժ կէտին վրայ ներկայ ըլլալու թրքական այս վազքը առայժմ պումերանկային հետևանքներ չ'ունենար մեծ չափերով: Առաջադրանքները, ճիշդ է, ամբողջովին չեն կատարուիր, այդուհանդերձ, Անգարան կը յաջողի որոշ տարածականութիւն ձևաւորել ազդեցութեան բանեցման առումով:

Ներիսլամական բախումնային իրավիճակի ձգտումը բնականաբար առաջին հերթին օգտակար է Իսրայէլին, որ կը շարունակէ սպառնալիք նկատել Իրանը: Երրորդ տարածքներու վրայ մղուող պատերազմի ռազմահարթակ կը նկատուի Լիբանանը, որ անմասնակցէ ճգնաժամի մէջ յայտնուած է ոչ այնքան ապաշնորհ վարչակառավարման դրոյթի պատճառով, որքան միջազգային տնտեսական պաշարումի: ԱՄՆ-ը և Արևմուտքի այլ ներկայացուցիչներ Իրանը մեկուսացնելու իրենց քաղաքականութեան մէջ առաջնահերթ միջավայրերէն կը նկատեն Լիբանանը, ուր իրանամէտ կուսակցութիւնը, Հըզպպլլան, տիրական է ոչ միայն քաղաքական, այլ նաև ռազմական դաշտին մէջ: Հըզպպլլան, սակայն, որդեգրած է ծայրայեղ զգուշաւորութիւն ներլիբանանեան հանգուցալուծման գործընթացները չարգելակելու և ռազմական հակադարձութիւններու չդիմելու տեսակէտէն:

Տնտեսական պաշարումը յստակօրէն առնչուած է իրանեան ազդեցութեան չէզոքացման բացայայտ և յայտարարուող առաջադրանքներուն հետ: Հայաստան Արաբական ծոցի և յատկապէս Արաբական Միացեալ Էմիրութիւններու և Քաթարի հետ տնտեսական յարաբերութիւնները բարելաւելու քայլերու կը դիմէ: Իրաքի քրտական ինքնավար շրջանին մէջ հիւպատոսարանի գործունէութեան ծաւալման որոշակի քայլեր կ'առնէ, երկրին մէջ կը շարունակէ իրականացնել խաղաղապահ առաքելութիւն, իսկ Սուրիոյ մէջ՝ մարդասիրական: Անկախ սահմանամերձ ըլլալու կարգավիճակէն, Երևանը ռազմավարական շահեր կը կիսէ տարածաշրջանին մէջ այլ երկիրներու հետ:

Թէ՛ Ռիատը և թէ՛ Ապու-Տապին չէին թաքցուցած իրենց տրամադրութիւնները Անգարայի դէմ: Անմասնակցութեան երևոյթ գրանցուեցաւ, երբ համաարաբական մամուլը, յատկապէս՝ Ծոցին մէջ լոյս տեսնող տարբերակները, դատապարտեցին Թուրքիան՝ հայերուն դէմ ցեղասպանութիւն գործադրած ըլլալու յանցանքով և արարքը հակադրելով իսլամական կրօնին: Այստեղ կար նաև սիւնի զանգուածին վրայէն թրքական ազդեցութիւնը չէզոքացնելու յստակ միտում,

Իրաք - ԱՄՆ ռազմական ներկայության դեմ բողոքի ցույցը Բաղդադում

յատկապէս՝ կրօնական թեմայի օգտագործումով: Լիբանանի մէջ Սէուտական Արաբիոյ դեսպանին այցը Անթիլիասի Ցեղասպանութեան Նահատակաց մատուռ պարզ դարձուց որոշակի շրջադարձ Սէուտական Արաբիոյ կողմէ ոչ միայն հակաթրքական պահուածքի նկատառումով, այլ նաև փրոհայկական: Ցարդ, Ռիատն ու Երևանը չունին դիւանագիտական յարաբերութիւններ, և չի բացառուիր, որ նման յարաբերութիւններու հաստատումը զինանոցային օրակարգ է Ռիատի համար:

Ռիատի դերի վերարժևորումը ԱՄՆ-ի կողմէ սպասելի է իբրև հակակշիռ քայլ Անգարայի նկրտումներուն: Այդ արժևորման կրնայ նպաստել Ուաշինկթըն-Թեհրան լարուածութեան ակնկալուած մեղմացումը կամ սկսած, բայց ընդհատուած Ռիատ-Թեհրան անուղղակի երկխօսութեան վերագործարկումը: Եթէ մտաբերենք նաև ՆԱԹՕ-ի միջինարևելեան ընդլայնուած ձևաչափի մասին Թրամփի կատարած յայտարարութիւնը, ապա Ռիատը առաջին երկիրներէն կրնայ նկատուիլ իբրև թեկնածու, ինչ որ իր հերթին կը հարուածէ տարածաշրջանին մէջ ՆԱԹՕ-ի միակ անդամ ըլլալու Թուրքիոյ հանգամանքին:

Այս բոլոր գործընթացներուն շատ մօտէն հետևելու հարկադրանքին առջև է հայկական քաղաքական միտքը՝ իբրև պետականութիւն և տարածաշրջանի հայ հասարակութիւն հայկական կողմին համար առաւելներ ձեռք ձգելու՝ եռացող տարածաշրջանին մէջ կատարուող իրադարձութիւններէն: ■

Հայաստան – ՀՅԴ – Սփիւռք (մինչև Սպիտակի երկրաշարժը)

Մկրտիչ մկրտիչեան

«Նիկոլ Դուման» ակումբի ինքնապաշտպանական խումբը Լիբանանի քաղաքացիական պատերազմի ժամանակ 1975թ.

Անցեալ հարիւրամեակի ընթացքին, Հայաստան-Սփիւռ յարաբերութիւնները անցած են բազմաթիւ փուլերէ: Յարաբերութեան տեսակը, տարողութիւնը, ծիրը, յաճախականութիւնն ու փոխադարձ թիրախները կախեալ եղած են հայրենիքին մէջ իշխող քաղաքական ուժէն, անոր հետապնդած նպատակներէն և ընդհանրապէս քաղաքական տեսլականէն: Անկախ իւրաքանչիւր ժամանակաշրջանի իւրայատկութիւններէն, հայութեան աշխարհագրական գրեթէ ամբողջ աշխարհը ընդգրկող տարածուածութենէն բխող հաւաքական մշակութային, կենցաղային ու բարքերու այլազան ազդեցութեններու պատճառած տարբերութիւնները անպայման դեր ունեցած են Հայաստանի՝ արտերկրի իւրաքանչիւր համայնքի հետ մշակած յարաբերութիւններուն վրայ: Այս յարաբերութիւնները շատ բարդ եղած են և տակաւին են ներկայիս. անոնք ցարդ գիտական լուրջ ուսումնասիրութիւններու առարկայ չեն դարձած: Յուսանք, որ Երևանի պետական համալսարանէն ներս քանի մը տարիներէ ի վեր գործող սփիւռքագիտութեան բաժանմունքը բաւականաչափ քաջալերանք կը ստանայ համալսարանի ղեկավարութենէն և երկրի կառավարութենէն, լուրջ աշխատանքի ձեռնարկել կարենալու համար:

1918 մայիս 28-ին հիմնուած Հայաստանի Հանրապետութիւնը, իր կարճատև կեանքի ամբողջ ընթացքին, համասփիւռ հայութեան ուշադրութեան և գուրգուրանքի առարկան եղած է: Բազմաթիւ կամաւորներ Հայաստան եկած են հասարակական գործունէութեան զանազան ոլորտներէ ներս օգտակար ըլլալու հայրենիքին: Յեղասպանութենէն ձևով մը ազատած զանգուածները, իրենց բազմատեսակ կարիքներուն ետևէն ինկած, բնական է, չէին կրնար առարկայական օժանդակութիւն հասցնել իրենց չափ վիրաւոր հայրենիքին: Սակայն Օսմանեան կայսրութենէն ներս հալածեալ հայութեան բեկորներ տասնամեակներ շարունակ բազմաթիւ ալիքներով արդէն կայք հաստատած էին Միացեալ Նահանգներու արևելեան ու արևմտեան ափերուն, կազմելով նկատառելի ուժականութեամբ օժտուած հայկական համայնքներ: Հանրապետութեան երկրորդ տարին՝ 1919-ը, եղաւ կայունացման շրջան մը, որ Սևրի դաշնագրի ստորագրութեամբ, 1920-ին, ամրապնդեց ազատ, անկախ ու ամբողջական հայկական պետութեան մը իրականացման յոյսը:

Ժամանակները այլ անակնկալներու առջև դրին հայութիւնը, բայց մինչ այդ, Հանրապետութեան կեանքի ընթացքին տեղի ունեցած ՀՅԴ միակ Ընդհանուր Ժողովը որդեգրեց Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստանի հիմնական քաղաքական

նպատակի տարազը, որ կը պահուի մինչև այսօր. այդ թուականէն ի վեր կուսակցութեան քաղաքականութեան այդ տարազումը հանդիսացաւ Դաշնակցութեան քաղաքական գործունէութեան հիմքը՝ հասարակական կեանքի բոլոր ասպարէզներէն ներս:

Շուրջ երկուքուկէս տարիներու գոյութենէ մը ետք, Հայաստանի Հանրապետութիւնը դարձաւ խորհրդային (սովետական) հանրապետութիւն՝ քեմալական և համայնավար ուժերու և դիւանագիտութեան համակարգուած գործողութիւններու իբրև արդիւնք: Հայաստանի խորհրդայնացման առաջին փուլը տեղի ունեցած էր իշխանութեան խաղաղ փոխանցումով մը. ՀՅԴ-ն կամաւոր ձևով յանձնած էր իշխանութիւնը համայնավար կուսակցութեան հայ ներկայացուցիչներուն, որոնք ամիսներ առաջ, մայիսին, պետական հարուածի ձախող փորձ մը կատարած էին: Բայց նոր իշխանութիւններու անհասկնալի վերաբերումը ոչ միայն դաշնակցական նախկին իշխանութիւններու անդամներու, այլ ընդհանրապէս հայ ժողովուրդի հանդէպ պատճառ դարձաւ համաժողովրդային ապստամբութեան, որ ալ աւելի սրեց հայութեան երկու հիմնական հատուածներու՝ մէկ կողմէն Դաշնակցութեան ու իր համակիրներու և միւս կողմէն՝ համայնավարներու և ժամանակի ընթացքին անոնց յարած կազմակերպութիւններուն և զանգուածներուն միջև յարաբերութիւնները:

Պառակտուածութեան այդ մթնոլորտը, առարկայական մակարդակի սուր և բուռն մէկէ աւելի դրսևորումներէ ետք, ապրեցաւ նաև մեղմացման հանգրուաններ, բայց այդ բաժանումը ենթակայական՝ մտածումներու ոլորտին մէջ, մոխիրներու տակ անթեղուած կը մնայ մինչև այսօր:

Հայաստանի մէջ խորհրդային իշխանութիւններու վերջնական հաստատումէն ետք, Դաշնակցութիւնը դարձաւ վտարանդի քաղաքական ուժ:

Իշխանութիւնները սկսան ՀՅԴ-ի դէմ բուռն պայքար մը՝ Հայաստանէն ներս և դուրս: Հայաստանի իշխանութիւնները ամէն ճիգ ի գործ դրին սփիւռքեան հետզհետէ կազմակերպուող համայնքները իրենց հակակշռին տակ առնելու. անոնք ամէն տեղ իրենց դէմ կը գտնէին Դաշնակցութիւնը: Այս բուռն հակադրութիւնը անմար մնաց մինչև Երկրորդ մեծ պատերազմը:

Երկրորդ աշխարհամարտէն ետք, Խորհրդա-յին իշխանութիւնները, Իոսիֆ Ստալինի առաջնորդութեամբ, Թուրքիոյ Առաջին համաշխարհային պատերազմի աւարտին Ռուսական կայսրութենէն պոկած Սուրմալուի, Կարսի և Արտահանի շրջաններու վերադարձը պահանջեցին՝ զանոնք Հայաստանին և Վրաստանին միացնելու նպատակով: Խորհրդային իշխանութիւններու հողային պահանջը հիմնաւորուած էր ցեղասպանութեան հետևանք հայկական համայնքներու բազմութիւնները հայրենիք վերադարձնելու տրամաբանութեամբ:

ՀՅԴ-ն իր ուժը միացուց այս պահանջին: Կազմակերպուեցաւ ներգաղթ դէպի Հայաստան. սկզբնական շրջանին, Դաշնակցութիւնը նոյնպէս խանդավառ էր այս աշխատանքով, բայց արագ փոխեց իր դիրքորոշումը, երբ խորհրդային կեդրոնական



Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը (Տփղիսեցի) օրհնում է կամաւորներին: (1918 թ.)

իշխանութիւնները դադրեցան Թուրքիոյ առջև դրուած հողային պահանջը հետևողական ձևով հետապնդելէ: Ատկէ ետք, հայութիւնը վերադարձաւ նախապատերազմեան ժամանակի ներհայկական յարաբերութիւններու վիճակին:

Հայաստանի մէջ, իշխանութեան դէմ որևէ ընդդիմութիւն արդէն չէզոքացուած էր երեսունական թուականներու ստալինեան երկաթեայ ու ոճրային բռնատիրութեամբ: Իսկ Սփիւռքի մէջ հակադիր ուժերու միջև սուր պայքարը տևեց առնուազն մինչև Ցեղասպանութեան յիսնամեակը, որոշ հանգրուանէ ետք ընդգրկելով նաև եկեղեցական ոլորտը, որ ստալինեան իշխանութեան վերջին հանգրուանին սկսած էր գործածուիլ քաղաքական նպատակներու համար:

Ցեղասպանութեան յիսնամեակի ոգեկոչումը դուռը բացաւ ներհայկական համապարփակ հաշտութեան առջև: Ան տեղի ունեցաւ Պաղ պատերազմի ձիւնհալի ժամանակաշրջանի սկզբնաւորութեան: Անոր բարերար ազդեցութիւնը զգացուեցաւ Լիբանանի տասնհինգամեայ քաղաքացիական պատերազմի ընթացքին և Սպիտակի քանդիչ երկրաշարժի վաղորդայնին, երբ Հայաստանի դուռները լայն բացուեցան սփիւռքեան բոլոր կազմակերպութիւններուն առջև՝ բարեսիրական, մարզական, մշակութային և քաղաքական, անոնց կարգին՝ որոշ թիւով դաշնակցական գործիչներու: Մինչ այդ, սկսած էր Խորհրդային միութեան գորպաչևեան հանգրուանը, որ կարճ ատեն ետք յանգեցաւ պահպանողական համայնավարներու զինեալ ըմբոստութեան և հսկայ կայսրութեան փլուզման ու անդամահատման:

Այսպէս, երբ 1991-ի աշնան վերանկախացաւ Հայաստանի Հանրապետութիւնը, ՀՅԴ-ն արդէն ներկայութիւն էր հայրենիքէն ներս: ■

Հանուն գիտության և ազգային արժեքների, կամ ազգայինն առաջադեմ է

Անահիտ Դանիելյան

Այսինչ երկրի այնինչ համալսարանում բացվել է հայագիտության ինստիտուտ: Հիանալի է չէ՞: Իսկ հիմա անդրադառնանք մեր իրականությանը: ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը հրապարակել է կրթական համակարգի «բարեփոխումների» փաթեթ: Եվ ի՞նչ. հայագիտական առարկաները տեղ չունեն բուհական պարտադիր ուսուցման ծրագրում: Ո՞վ է ասում, որ բոլոր փոփոխությունները բարի են լինում, գուցե ճիշտ հակառա՞կն է:

2019 թ. նոյեմբերի սկզբին ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միությունը սոցիալական հարթակում հրապարակեց մի քանի կետերից բաղկացած պահանջներ, որոնցով հիմնավորում էր ԿԳՄՍ նախարար Արայիկ Հարությունյանի հրաժարականի հարցը: Երիտասարդները գտնում էին, որ իրեն վստահված կարևորագույն ոլորտներում նախարարը իրականացնում է բացահայտ ազգային և ապաշնորհ քաղաքականություն:

Նոյեմբերի 7-ին ԿԳՄՍ նախարարության շենքի դիմաց կազմակերպված բողոքի գործողության ընթացքում երիտասարդները կոչ արեցին նախարարին հնարավորինս արագ հրաժարականի դիմում գրել և հեռանալ: Հաջորդ միջոցառումը տեղի ունեցավ կառավարության շենքի դիմաց: Հրաժարականի պահանջը բավարարված չէր, և անհրաժեշտ էր նոր քայլեր ձեռնարկել: Պայքարի հաջորդ հանգրվանը նստացույցն էր: Երիտասարդները Կառավարության շենքից երթով շարժվեցին դեպի Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն և շուրջօրյա անժամկետ նստացույց հայտարարեցին: Չնայած ցուրտ եղանակին՝ բողոքի գործողությունները շարունակվեցին մի քանի շաբաթ: Շաբաթներ շարունակ փաստարկված պարզաբանումներով հանրությանն էին փոխանցվում ուսանողության հարցադրումները, որոնք ոչ միայն իրենց էին հուզում: Ըստ երիտասարդների՝ Ադրբեջանի և Թուրքայի նման հարևաններ ունեցող երկրում սեփական արժեքները մոռանալու, անտեսելու իրավունք չկա, երբ նույն այդ հարևանները չգիտես ինչ հիմքի վրա կառուցում ու զարգացնում են սեփական ազգային պետությունները: Տասնյակ քաղաքացիներ ամեն օր ցուցարարներին իրենց զորակցությունն էին հայտնում և օգնություն առաջարկում: ՀՅԴ Երիտասարդների օրինակով բողոքի ձայն բարձրացրին բազմաթիվ այլ ուսանողներ և դասախոսներ: Այս պայքարն ուղղված չէր միայն բուհերում հայոց պատմության, հայոց լեզվի և գրականության պարտադիր ուսուցման պահպանմանը, հայոց եկեղեցու պատմության ու ռազմագիտության՝ հանրակրթական դպրոցներում որպես առանձին առարկաների դասավանդմանը: Պայքարը նաև հանուն ազգային մշակույթի և սպորտի էր: Պայքարը գաղափարական էր՝ հանուն արժեհամակարգի: Ստեղծվել էր մի հարթակ, որտեղ յուրաքանչյուր ոք

կարող էր արտահայտել իր տեսակետը՝ անկախ այն բանից՝ այն համընկնո՞ւմ է երիտասարդների տեսակետին, թե՞ ոչ: Եվ գտնվեցին մշակույթի գործիչներ, ովքեր բաց չթողեցին հնարավորությունը և իրենց մտահոգությունները բարձրաձայնեցին այդ հարթակից: Հայտարարություններով հանդես եկան նաև սպորտի գործիչները:

Նախարարը պատրաստակամություն հայտնեց հանդիպելու և «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի բոլոր խնդրահարույց կետերը քննարկելու շահագրգիռ կողմերի հետ, որոնց շարքում, ըստ նախարարի, ՀՅԴ ՀԵՄ-ը չկար: Այսպիսով պարոնը փորձում էր կիրառել «բաժանի՛ր, որ տիրես» սկզբունքը՝ ՀԵՄ-ականների և այլ ուսանողների միջև սեպ խրելու և ուժերը ցլատելու նպատակով: Սակայն այս քայլն էլ չարդարացրեց իրեն: Հաջորդեց ԿԳՄՍ նախարարի և մի շարք դասախոսների ու գիտաշխատողների հանդիպում-քննարկումը «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագծի շուրջ, որի ընթացքում նախարարը դրսևորեց խիստ ամբարտավան կեցվածք: Ըստ ցուցարարների՝ նստացույցը կատարեց իր առաքելությունը, այն է՝ ստեղծված իրավիճակը դարձնել երկրի թիվ 1 օրակարգային մտահոգությունը, հասցնել այն հանրության լայն շրջանակներին: Շուրջ 3 շաբաթ տևած նստացույցը դադարեցվեց: Սակայն բողոքի գործողությունները չավարտվեցին:

Նոյեմբերի 29-ին ՀՅԴ ՀԵՄ-ը պաշտոնական հայտարարություն տարածեց, որում ասվում էր.

«Երեքշաբթի օրը՝ դեկտեմբերի 3-ին՝ ժամը 15:00-ին, ԿԳՄՍ նախարարության շենքի դիմաց սպասելու ենք Արայիկ Հարությունյանին՝ մեր պահանջները անձամբ ներկայացնելու համար:

Ստորև ներկայացում ենք այդ պահանջները.

1.Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներում արդիական պահանջներից և ազգային

պետություն ունենալու հրամայականից բխող համապատասխան ռազմավարությունների մշակում և հրապարակում:

2.Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտների պետական ֆինանսավորման էական ավելացում: Առաջիկա տարիների համար անհրաժեշտ է ռազմավարական նպատակ ունենալ կրթությանը հատկացվող միջոցների ծավալի մեծացումը՝ այնպես, որ այդ միջոցները կազմեն ՀՆԱ 3-4 տոկոսը, իսկ գիտության պարագայում այդ թիվը պետք է գերազանցի ՀՆԱ 1 տոկոսը:

3.Ապահովելով «Հայոց լեզու» և «Հայոց պատմություն» առարկաների՝ բուհերում դասավանդման պարտադիր սկզբունքը՝ ձեռնամուխ լինել համապատասխան հայեցակարգերի ու մասնագիտական ծրագրերի մշակմանը:

«Հայոց լեզու» առարկայի դասավանդման շրջանակներում պետք է ձեռք բերվեն հիմնավոր գիտելիքներ, որոնք թույլ կտան բուհ-ի շրջանավարտնե-րին տիրապետել մասնագիտական տերմի-նաբանությանը: «Հայոց պատմություն» առարկայի պարագայում ուսանողների շրջանում պետք է ձևավորել քննական մտածողություն և սեփական հայրենիքի առջև ծառացած մարտահրավերների խորքային ընկալում:

4.Ապահովելով «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի պարտադիր դասավանդումը դպրոցներում՝ ուշադրություն դարձնել առարկայի շրջանակներում ազգային ինքնության անքակտելի մասը կազմող Հայ առաքելական եկեղեցու էության ներկայացմանը, աշակերտների շրջանում պետականամետ և հայաստանակենտրոն մտածելակերպի ամրապնդմանը:

5.Շրջանառությունից հանել կամ արմատապես վերանայել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նախագիծը:

Ձեռնամուխ լինել բուհերի իրական ակադեմիական ազատության և կառավարման ինքնավարությանը նպաստող նախագծի ներկայացմանը, որը նպատակ պետք է ունենա ապահովելու բուհ-գիտություն-աշխատաշուկա կապը: Նախագծում պետք է որոշակի լինի նաև գիտության զարգացման գործում Գիտությունների ազգային ակադեմիայի դերը:

6. Այս փոփոխությունների կարևորությունն անտեսող կամ ազգային օրակարգը հեգնող ցանկացած պաշտոնյա պետք է օր առաջ ազատվի զբաղեցրած պաշտոնից:

Մեր գործողությունները շարունակելու են բխել վերը նշված պահանջների կյանքի կոչման հրամայականի տրամաբանությունից»:

Դեկտեմբերի 3-ին երիտասարդները հավաքվեցին ԿԳՄՍ նախարարության շենքի մոտ՝ պահանջելով հանդիպում կազմակերպել նախարարի հետ: Հանդիպումն այդպես էլ չկայացավ. երիտասարդներն ակցիան տեղափոխեցին նախարարության մուտքի մոտ: Ոստիկանությունը ուժի կիրառմամբ բացեց նախարարության մուտքը, սակայն ակցիան չավարտվեց: Երիտասարդները փակեցին Վազգեն Սարգսյանի անվան փողոցը և սկսեցին ազգային երգեր երգել: Ոստիկանական ուժերի քանակին նայելիս թվում էր, թե գործ ունեն վտանգավոր հանցագործների հոծ բազմության հետ: Ոչ համաչափ ուժ կիրառելով՝ ոստիկաններին հաջողվեց բացել փողոցը: Բերման ենթարկվեցին շուրջ 3 տասնյակ ցուցարարներ: Մի՞թե այս քայլն արվեց երիտասարդներին վախեցնելու կամ ճնշելու նպատակով: Եթե այո, ապա նշանակում է՝ «սուպեր» նախարարն ու նրա «պահապանները» հաշվի չառան, որ այդ երիտասարդներից շատերը 2016 թ. ապրիլին իրենց կյանքն էին վտանգել հանուն հայրենիքի: Նրանք Թալիշի մարտական դիրքերում պայքարում էին թշնամու դեմ: Եվ ի՞նչ, մահից, թշնամուց չվախեցող երիտասարդը հայ ոստիկանի՞ց պիտի վախենար: Երիտասարդները պատրաստ են դիմակայելու ցանկացած արհավիրքի, որը կսպառնա մեր պետությանն ու ժողովրդին: Պայքարը շարունակվում է:

Հանուն ազգայինի մղվող պայքարը, հաղթանակից զատ, այլ ելք չի կարող ունենալ:

«Դրօշակ» պաշտոնաթերթի 1992թ. 21-րդ համարում (հունվարի 29)՝ «ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ» խորագրի ներքո, հրապարակվել են ՀՅԴ այլ պաշտոնաթերթերի նյութեր, որոնց «Դրօշակի» խմբագրությունը կցել է նախաբանի իր խոսքը: Տվյալ հրապարակումներից անցել է 28 տարի, սակայն, մասնավորապես «Դրօշակի» նախաբանը, չի կորցրել հետաքրքրությունը: Մենք այսօր վերատին այն ներկայացնում ենք ընթերցողին:

Խմբագրության կողմից

Հ.Յ.Դ. ԱՆԵԼԻՔԸ ԱՅՍՕՐ

Դաշնակցութիւնը ներքնապէս ջլատել փորձելու Հ.Հ.Շ.ական ռազմավարութիւնը նոր թափ ստացած է Հոկտեմբեր 16ի Հայաստանի նախագահական ընտրութիւններէն ասդին: Հայրենի խորհրդարանի պաշտօնաթերթ «Հայաստանի Հանրապետութիւն» թերթէն սկսելով, Հ.Հ.Շ.ի պաշտօնաթերթ «Հայքէն» անցնելով և ռամկավար թէ այսպես կոչուած անկուսակցական յետին թերթին հասնելով՝ հակադաշնակցական պայքարի նորելուկ գաղափարախօսները անձնատուր դարձած են գաղափարական մեր շարժումը «զգետնած» ըլլալու... գինովութեան: Հակադաշնակցական մաղձոտ այդ արշաւին իրենց գործօն մասնակցութիւնը կը բերեն մանաւանդ Դաշնակցութենէն հեռացուած, կամ՝ տակաւին մեր շարքերուն մէջ գտնուելով հանդերձ՝ գաղափարականօրէն Դաշնակցութենէն խորթացած մարդիկ: Մեր կուսակցութիւնը նման **«գրոհներ»** շատ տեսած ու յաղթահարած է իր պատմութեան ընթացքին, կը յաղթահարէ նաև նեօ-պոլշևիկներու հրահրած և հունաւորած հակադաշնակցական պայքարի այս փուլը: Կը մնայ, որ Դաշնակցութեան հոգը ապրող մարդիկ, կուսակցական ըլլան թէ ոչ, անդրադառնան և ամէն պարագայի մը ընտահան չը ընեն այն իրողութիւնը, որ հակադաշնակցական պայքարը այսօր կը փորձէ Դաշնակցութեան դէմ գործածել նոյնինքն Դաշնակցութեան գաղափարական զէնքերը: Հայ ժողովուրդի ազգային-ազատագրական պայքարին մասին կը խօսին՝ բայց ո՛չ հողային պահանջ ունին, ո՛չ ալ հայութիւնը հայրենիքի մէջ մէկտեղելու առաջադրանք: Արցախի ինքնորոշման իրաւունքէն կը ճառէն, բայց Արցախի Դատը Հայաստանի կարիքներուն արուեստականօրէն հակադրելու քայլեր կ'առնեն: Նման կեղծիքի մը դէմ յանդիման՝ դաշնակցական միտքը պէտք է կարէնայ յստակօրեն իրարմէ զանազանել մէկ կողմէ Դաշնակցութեան վերագրուած տագնապները, իսկ մյուս կողմէ մեր կուսակցութեան դիմագրաւած դժուարութիւնները: Հետագայ էջերով մէկտեղուած նիւթերը կը վկայեն յատկապէս հիւսիսային Ամերիկայի մէջ հակադաշնակցական պայքարի այս նոր **«զօրաշարժին»** գտած արձագանգին մասին: Մինչ Քանատայի մեր պաշտօնաթերթին՝ «Հորիզոն»ի խմբագրականը և Ռ. Փիրումեանի, Հ. Ջէյթլեանի և Գ. Օհաննէսեանի յօդուածները արժանի պատասխանը կուտան ներքին ճակատի վրայ պարզուող տկարացումներուն, Վ. Օշականի յօդուածը արդէն կը տառապի հակադաշնակցական վերագրումներուն առջև խուճապահար դառնալու վիճակէ մը: Ինքնաքննադատական խօսքը պէտք չէ վերածել ինքնախարազանման, եթէ լծուած ենք Հ.Յ.Դ.ի ուղին հարթելու գործին: ■



1919 թվականի հունվարի 18-19-ի գիշերը Թիֆլիսում հիվանդությունից մահանում է «Հայ Յեղափոխական Դաշնակցության» Բյուրոյի հիմնադիր երրորդության վերջին անդամ Ռոստոմը՝ (Ստեփան Զորյան): 10 օր անց Երևանում, նույնպես մահվան մահճում, մահկանացուն է կնքում նորաստեղծ հանրապետության հիմնադիր և պետականակերտման գործի գլխավոր դերակատար Արամ Մանուկյանը: Բանտում հյուծվելով՝ 1938 թվականի հունվարի 15-ին հիվանդանոցում մահանում է բոլշևիկյան իշխանությունների կողմից մահվան դատապարտված՝ Հայաստանի առաջին հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին: Ստորև ներկայացվում են պատառիկներ այս երեք ազգային մեծերի մտքերից, որոնցում բազմակողմանիորեն դրսևորվում են դրանց հեղինակները:

Խմբագրության կողմից

Արամը

Արամ Մանուկյանը հիշատակի խոսք է թողել մի շարք ընկերների նահատակության առիթով: «Դրօշակ» պաշտոնաթերթի 1913 թվականի 9-10-րդ համարում այդպիսի խոսք է տպագրվել՝ նվիրված Հարություն Միրաքյանին: Այդ խոսքից ընտրված փոքրիկ հատվածում անգամ կարելի է տեսնել ու ճանաչել Արամ հեղափոխականին ու մեծ մարդուն: Միաժամանակ ճակատագրորեն այդ խոսքը ավելի ուշ մեկ ուրիշը կարող էր գրել մահճի մեջ երկնային կյանքն ավարտած Հայաստանի Հանրապետության հիմնադրի մասին:

Երբեմն մարդիկ յաւերժանում են սերունդների յիշողութեան մէջ, շնորհիվ իրենց մահուան ձեւին, քան կատարած գործերին: Եւ որքա՜ն դժբախտ են նրանք, որոնց մահը չի համապատասխանում իրենց կեանքին ու գործին...Հասկանալի է, որ բոլոր ուժեղ յեղափոխական դէմքերը սարսափում են խաղաղ, հիվանդ անկողնում մահանալու հեռապատկերից:

Ռոստոմը

1917թ. Ստոկհոլմում տեղի է ունեցել Սոցիալիստական ինտերնացիոնալի (Ընկերվար միջազգայնականի) համագումար, որին «ՀՅ Դաշնակցության» կողմից մասնակցել և հուշագիր է ներկայացրել Բյուրոյի անդամ Ռոստոմը: Հուշագրում նկարագրվում են նախորդող տարիներին երիտթուրքական իշխանությունների կողմից հայության նկատմամբ իրականացված բռնություններն ու սպանդը, խոսվում է հետագա աղետը կանխելու համար անհրաժեշտ միջոցառումների մասին, ինչպես նաև ներկայացվում են ՀՅԴ տեսակետները քաղաքական ճանապարհով պատերազմի հետևանքների վերացման վերաբերյալ:

Ներկայացնում ենք մի հատված «Յիշատակագիր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» փաստաթղթից, որը ֆրանսերեն բնագրի հետ տպագրվել է «ՆԻՒԹԵՐ Հ.Յ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ» փաստաթղթերի ժողովածուի ԺԲ հատորից (Պէյրութ, 2016, էջ 270):

Անմիջական խաղաղութեան հաստատումը առաջնակարգ նշանակութիւն ունի աւերեալ Հայաստանի համար: Ան պէտք է կնքուի ռուսական ժողովրդավարութեան հռչակած երեք սկզբունքներուն հիման վրայ: Եթէ մենք հակառակ ենք պատերազմական հարկադրանքի գաղափարին, բայց

եւ այնպէս կը գտնենք, որ արդար է հարցում պահանջել մասնաւորաբար այն երկիրներու համար, որոնք աւերուած են՝ մանաւանդ մարդկային իրաւունքներու եւ միջազգային դաշնագիրներու դրժումին հետեւանքով: Այդպիսի պարժամիջոց մը զգալիօրէն պիտի նուազեցնէր ապագայ պատերազմներու վտանգը: Հակառակ ենք նոյնպէս, ինչպէս էինք նախապէս, հողային բռնագրաւումներուն: Եւ որովհետեւ այս սկզբունքը տարբեր մեկնաբանութիւններու տեղի կուտար, մեր կուսակցութեան ընդհանուր {ոայոնական} ժողովը (գումարուած Թիֆլիս, 1917 թ. 6-12 Ապրիլին) հարկ տեսաւ ընդգծելու, որ հակաժողովրդավարական կը նկատէ ոչ միայն նուաճուած երկիրներու բռնագրաւումը, այլ նաեւ ժողովուրդներու ենթարկումը իրենց նախկին բռնակալներուն: «Ոչ կցումի» սկզբունքը պէտք չէ գործադրել անջատաբար, այլ տեսնել զայն «ժողովուրդներու ազատօրէն ինքնորոշուելու» սկզբունքին լոյսին տակ»:

Քաջազնունին

Հովհաննես Քաջազնունին իր թողած քաղաքական-տեսական աշխատանքներով այսօր էլ մեզ հուզող և արդիական ասելիք ունի:Ներկայացնենք մի հատված Քաջազնունու «Ի՞նչ Պէտք Է Լինի Մեր Ուղին» (ՃԱԿԱՏԱՄԱՐՏ, Կոստանդնուպոլիս, 1922-ի Մայիս-Յունիս ամիսներ) աշխատությունից:

...Վերջացա՛ւ սրանով մեր դատն ու պայքարը: Սպառե՛ց ենք արդեօք բոլոր հնարաւորութիւնները, գործածե՛լ ենք բոլոր ուժերը ու – անմնակ հանդիսացել... Կարո՞ղ ենք ասել, թէ այլեւս բան չունինք անելու, թէ մեր ինքնահաստատուելու տենչը ու կարարած փորձը մի գեղեցիկ ցնորք էր միայն, որ խորտակուեց անողոք իրականութեան բախուելով, թէ քաղաքական անկախութիւնը մեր ուժերից վեր է, եւ թէ մեզ մնում է միայն խոնարհուել ճակատագրի առաջ ու լռելեայն մեռնել...

Ո՛չ, պետութիւնները չեն կազմում մի օրուայ մէջ ու մանաւանդ չեն կազմում հեշտօրէն:

Երեխաները միայն կարող են երազել, թէ, մի գեղեցիկ օր, մեր պետութիւնը – կազմ ու պատրաստ, ծաղիկներով զարդարուած ու շաքարեղէններով համեմուած – կը դիմէր մեր առաջը ու մեր պահապան հրեշտակը կ՚ասէր վերից – վայելեցէք խաղաղութեամբ...

Կռուի ու տանջանքների մէջ են ծնում ազատութիւնները: Մեր երկունքը եղաւ աւելի երկար ու աւելի ծանր, քան իրաւունք ունէինք սպասելու,--թերեւս այնքան երկար ու այնքան ծանր, որ մեր ուժասպառ կազմը չկարողանար դիմանալ:

Թերեւս: Բայց այսօր դեռ վաղաժամ է այդ յոռետեսութիւնը, ուրեմն եւ փոքրոգութիւն՝ գինադուլը:

Հայաստանի այսօրուայ կացութիւնը ԿԱՐՈՂ է հասցնել քաղաքական մահի: Այդ սպառնալիքը կայ եւ շատ լուրջ է. Բայց ոչ անխուսափելի, ոչ անյաղթելի: Այսօրուայ կացութիւնը ի՛նքը կարող է դառնալ (գուցէ եւ է՛ արդէն) մի շատ կարեւոր ատրճան՝ հետեւեալ քայլը առնելու համար...

Պայքարը շարունակւում է, շարունակւում է կազմակերպման ՊՐՈՑԷՍը: Դատը դեռ չի կորցուած եւ աւելի քան երբեք պահանջում է ուժերի լարում:

Փրկե՛լ պետութիւնը, ամուր հիմքերի վրայ դնել ու կենսունակ դարձնել այն, – ահա մերանելիքը: Սա պիտի լինի մեր այսօրուայ ամենամեծ հոգսը – միա՛կ մեծ հոգսը:

Յաջողելու համար պէտք է կեդրոնացնենք այս

կէտի վրայ մեր ամբողջ կարողութիւնը, ամբողջ ուշադրութիւնը ու ամբողջ աշխատանքը:

Յաջողելու համար պէտք է միացնենք մեր ուժերը այն բոլոր կենդանի ուժերին, որոնք պայքարում են – ինչ գոյնի եւ դրօշի տակ էլ լինի – նոյն նպատակի համար:

Ո՛վ մեզ հետ միասին կանգնած է այս ճամբու վրայ ու վճռականութիւն ունի մինչեւ վերջը գնալու, նա ԻՍԿԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ է, ինչ անուն էլ կրելու լինի (ԲՈՒՐԺՈՒԱ թէ ՊՐՈԼԵՏԱՐ, ընկերվարական թէ կղերական, ռամկավար թէ բոլշեւիկ), նա մեր բնական ու անբաժանելի դաշնակիցն է:

Եւ թշնամի է նա, ով – գիտակցօրէն թէ ակամայ, յանուն համաշխարհային յեղափոխութեան թէ հակայեղափոխութեան, յանուն ԲՈՒՐԺՈՒԱյի թէ ՊՐՈԼԵՏԱՐի, – կտրում է մեր ճամբան, պատնէշներ կառուցանում ու խրամատներ փորում մեր գրոհի առջեւ:

ՊԵՏՈ

Հունվարի 30-ը ՀՅԴ Շուշիի առանձնակի գումարտակի փոխհրամանատար Պետրոս Ղևոնդյանի ծննդյան օրն է:

Նկարում. 1993 թվականի հունվարի 15-ին Սրխավենդի անտառներում Պետոն մարտիկներին բացատրում է Շարժական զենիթահրթիռային համալիրի գործածության ձեւը: Ռոպեներ անց Արցախի երկնքում կհայտնվի թշնամական ՄԻԳ 25 գերձայնային կործանիչը, որը գետին կտապալվի Պետոյի դիպուկ կրակոցից:

ԴՐՕՇԱԿ

Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ